

# ԳՐԵՐԹԵՐԹ

N 1 (47) Գինը 200 դրամ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԿՅՈՒԹՅԱՄ

«ԳՐԵՐԹԵՐԹ» ԻՐ ՇՆՈՐՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՅՏՆՈՒՄ ԵՐԳՉՈՒՎԻ, ԱՓ ՊԵՏԱԿԱՆՎՈՐ ՇՈՒՆԸՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԹԵՐԹԵՆ ԱԶԿՅՈՒԹՅԱՄ

ՀԱՄԱՐԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՏՆՈՒՄ «ԱՆՏԱՐԵՍ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԳԱՎՈՒԹՅԱՄ



ՀԳՄ ԳՐԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԹԵՐԹ - ՀԳՄ ԳՐԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԹԵՐԹ - ՀԳՄ ԳՐԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԹԵՐԹ - ՀԳՄ ԳՐԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԹԵՐԹ



վածքը մտածված է արվել՝ հիշեցնելու Դոստոևսկու անգուստ սերը ռուլենոկա խաղի նկատմամբ: Բաղեն-Բաղենում այդ միֆակամացված մարդը, ով այդպես մաքուր կարողացել է տեսնել մարդկային հոգիները, մտնում է խաղատուն ու տանուլ տալիս իր վերջին գումարները: Չէ՞ որ ռուլենոկան պատվող կյոթ է, ինչպիսին Աստված էր անտիկ պատկերացման մեջ, և ռուլենոկայից կարելի էր պահանջել այն, ինչ չէր տվել Աստված:

Աստիճաններ են ուղեբերիդ տակ, ու դիմացով վեր բարձրացող մարդիկ, ովքեր դեռ ժպտալով գրուցում են իրար հետ, իսկ այնտեղ մտնելուց հետո համբանում են: Չէ՞ որ տրոյական ձիու ներսից պիտի ձայն չգա, չէ՞ որ ոչ ոք զլխի պիտի չընկնի, որ տանը լինելը դեռ չի նշանակում հյուրընկալվել, որ օղանավից օղանավակայան իջնելը դեռ չի նշանակում լինել քաղաքում, որ գիրքը ձեռքումդ բռնելը դեռ չի նշանակում...

Աստիճանները որպես Միգիլոսի չորացած արցունքներ, ու ներսիդ քարերը,

ժամանակը, դու տեսնում ես միայն արդյունքը, ներկան: Իրական ընթերցողը զգում է նաև գրքի մեջ կուտակված ժամանակը, որը գիլիտոսի մի պես անընդմեջ շրխկում է նրա գլխին՝ կտրելով իրականությունից: Երբ Դոստոևսկին երիտասարդ էր, նա էլ էր փորձում փոխել աշխարհը, նա էլ էր հեղափոխական, հետո, հետո...

Քեզ միշտ ավելի շատ են հետաքրքրել այն գրողները, ովքեր մահացել են երիտասարդ տարիքում: Նրանք չեն հասցրել հասկանալ երիտասարդության պատրանքը կամ հասկանալով չեն ցանկացել դուրս գալ այնտեղից: Մեծ վեպ գրելու համար պետք է երկար ապրել, պետք է համակերպվել ժերմանալու մտքին, պետք է պատրաստ լինել սեփական տրոյական ձիերի գրոհներին:

Վերջապես ցած ես իջնում: Միգիլոսի արցունքները մույսե պերջանում են, այդ պատճառով աստիճանը միայն հատվածներ է միացնում իրար:

Ընդունարանում իրարանցում էր, մի կատու էր մտել ներս ու դիվային ֆշշոցով վազում էր այստայնկողմ, զգում էր տաղավարի վրա դրված գրողի վաճառվելիք լուսանկարներն ու լուցկու տուփերը, որոնց վրա նույնպես նրա դեմքն էր: Անվտանգության աշխատակիցները ոչ մի կերպ չէին կարողանում բռնել կենդանուն, իսկ զբոսաշրջիկները զարմացած նայում էին կատաղած կատվին: Աշխատակիցների խոսքերից հասկացվում էր, որ այդ կատուն առաջին անգամ չէ, որ ներս է մտել:

Նրանք չորս կողմից շրջապատել են կենդանուն: Նրանցից մեկի ձեռքին բավականին մեծ արկղ է: Կենդանին կարծես հասկանալով, որ դիմադրելն ապարդյուն է, խփվում է արկղին: Աշխատակիցները փակում են այն ու դուրս հանում: Արկղից լսվում է, թե ինչպես է կենդանին եղունգներով քերում պատերը:

Դու մտնում ես վաճառողին, մի քանի հուշանվեր գնում ու դուրս գալիս: Տեսնում ես դռանը մոտեցող երիտասարդների մի մեծ խումբ, մտովի խառնվում ես նրանց խմբին ու նորից բարձրանում վերև, սկսում պտտվել...

Քաղաքի ձայները փշրում են ցանկացած խորհրդավորություն ու քեզ նորից տեղափոխում փողոց: Չգիտես ինչու մտածում ես, որ աշխատակիցները սպանել են կատվին իր վայրենի պահվածքի պատճառով:

Ոտքերիդ տակ հավաքված քաղաքային աղավիհները մոտոցիկլետի ձայնից բարձրանում են օդ ու իրենց քեռից ցած զգում գիտակցում, որ շուտով երիտասարդներով լցված բոլոր տրոյական ձիերը բացվելու են, ու քաղաքները նորից են գրավվելու: Երիտասարդները կանգնեցնելու են միապետի ընտանիքը պատի տակ ու անվերջ կրակելու են նրանց ուղղությամբ, հետո՝ բոլորին, ովքեր

## ԵՐՎԱՆԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Դու պտտվում ես սենյակներով լցված նրա մասին հիշողությունների մնացուկներով: Դանապարհի ու իրականության միջև կապը զգալու համար մատնաձայներով շոշափում ես նրա տան կահույքը, ապա մոխրասպիտակ հագուստով կնոջը խնդրում նկարել քեզ աշխատասենյակի ֆոնին: Լուսանկարը, որպես ինքնապաշտպանության դրսևորում, իր տեղն է գտնում փոքրիկ սարքի ներսում, որի մեջ լողում են անցյալի քարացած հայացքները: Հիշողության անըմբռնելի իրարանցումը՝ հավաքված տան ստվերագույնի ներսում, ու պտույտը՝ մանկական սենյակից մինչև գրասեղան, մարդկային կյանքի խտացված ամբողջությունը՝ ժամացույցի սլաքի պես պտտվող սենյակներում, անընդմեջ քեզ բերում են միջանցք, որտեղ ելքն է, որն էլ ցանկության դեպքում քեզ կմոտեցնի աստիճաններին:

Ելքը տուն-ժամացույցի միջից հնարավոր է միայն, երբ վրայիցդ դեն ես զգում խորհրդավորության ու ընտրվածության կաշուն մտքերը, որոնք անկախ քո կամքից՝ պարտում են գիտակցությունը: Հյուրասենյակի պատուհանից նայում ես ցած, փողոցի եզրամասին մի կատու է պառկած ու տեղից չի շարժվում, գուցե ընկել է մեքենայի տակ կամ քնած է:

Կողքդ երկու կանայք վիճում են, նրանցից մեկը պնդում է, որ ժամացույցի կանգնած սլաքը մատնանշում է Դոստոևսկու, իսկ մյուսը՝ նրա կնոջ մահվան պահը:

Մարդիկ քայլում են փողոցներով, լցվում իրենց տները, կատուն հանկարծ վեր է կենում ու թափ տալիս իրեն, իսկ կանայք դեռ վիճում են, կարծես դա ինչ-որ անչափելի կարևորության հարց է. գո-

յության առասպելականացումը միշտ էլ ծնում է ծիծաղելի հետևանքներ:

Այստեղ նա մահացել է, այստեղ գրել է, այստեղ նա վերջնականապես ծերացել է...

Քո ամեն պտույտի հետ նոր մարդիկ են ավելանում, հիմնականում՝ երիտասարդներ: Մանկական սենյակը, որ քիչ առաջ դատարկ էր, հիմա լցված է ուսանողների խմբով, հյուրասենյակում այլևս կանգնելու տեղ չկա: Բոլորի հայացքներում խորհրդավոր ու առասպելական ինչ-որ բծեր են լողում ու խառնվում իրար, ձայնը հուշիկությամբ դուրս է լողում նրանց շարժվող բացվածքներից, կարծես գտնվում են տրոյական ձիու ներսում, ու հաշված վարկյաններ են մնացել, որ դուրս գան նրա միջից, գրավեն քաղաքը՝ ընկած իրենց ոտքերի տակ:

Մի անգամ էլ ես պտտվում, զննում սենյակները, մտնելով հյուրասենյակ՝ մոտենում ես պատուհանին, նայում ցած, փորձում գտնել կատվին, չի հաջողվում: Քավելով մարդկանց՝ մոտենում ես ելքին, հետո նորից պտտվում ես, մտածում, որ գուցե սենյակների պտուտած կառուց-

որոնցից այդպես էլ չկարողացար թոթափվել. նայելով խազապատ հայելուն՝ չդիմացար ու սկսեցիր շոշափել: Շոշափել՝ նշանակում է փնտրել գոյությանդ ապացույցը, համոզվել, որ զգացողը հենց դու ես, այլ ոչ մեկ ուրիշը: Չէ՞ որ երիտասարդի համար կարևոր է միայն իր զգացածը:

Թանգարաններում մենք փնտրում ենք մեզ մեր գոյության արդարացումն ու հիմնավորումը: Նայում ենք նկարներին հույսով, որ ուր որ է նրանք կսկսեն խոսել մեզ հետ: Չէ՞ որ մենք երիտասարդ ենք: Մեր ապագան առջևում է: Մենք դեռ կարող ենք գերազանցել նրանցից ցանկացածին, ու բոլորը պետք է հետևեն մեր գաղափարներին: Բոլորը, չգիտես թե ինչու, բայց պետք է օգնեն մեզ, որպեսզի մենք էլ մի օր դառնանք տրոյական ձի ու հանգրվանենք մեր երազած քաղաքում, սպասենք մեր մեջ լցվողներին: Երբ դու երիտասարդ ես ու կարդում ես վեպեր, քեզ թվում է, որ դու էլ կարող ես նույնը անել, մեծ բան պետք չէ դրա համար: Քանզի դու չես նկատում գրքի մեջ կուտակված

## Ֆյոդոր<sup>1</sup> կամ ռուլենոկա երիտասարդների համար



1. Ավտորուսը մտավ Ղարաբաղ,  
 Իսկ ներսում  
 Հնչում էր «Երևան, Երևան»:<sup>1</sup>  
 Ես չհասկացա՝  
 Պատերազմն էր  
 Մասնատվում իմ մեջ,  
 Թե քաղաքը,  
 Որում լքել էի ինձ:

2. Ճաքում եմ  
 Ազատության վերքերում,  
 Ու՞ր ես, չկաս,  
 Թող կտրեն  
 Ձեռքս ու ոտքս,  
 Բայց ոչ հոգիս,  
 Ես տեսնում եմ ինձ  
 Այնտեղ, ուր վազում եմ  
 Վայրի ձիերը  
 Հեռու ծեղերի,  
 Ուր ապրելու միակ ձևը  
 Քամին է սուրացող,  
 Ու՞ր ես, չկաս,  
 Երբ ցուրտը  
 Խնջույք է փռել  
 Մրտումս:

3. Ճամփորդին  
 Պակասում է աշխարհը,  
 Դու՛ ինձ,  
 Իսկ ես դեռ փորձում եմ ազատվել  
 Քեզնով բուրող բառերից,  
 Հետո փորձում եմ  
 Փնտրել կյանքը,  
 Ու լուռ բավվում ես վրաս  
 Որպես աշուն  
 Չորացած կոճղին:

4. Վաղն էլի  
 Կսիրեմ քեզ,  
 Իսկ այսօր  
 Շունչս այրում է  
 Տափաստանի արևը,  
 Երբ ես այստեղ եմ,  
 Այս մռայլ հագուստի մեջ  
 Միայնության,  
 Ու բառերս  
 Երգ են փնտրում  
 Տունդարձի:  
 Վաղն էլի  
 Կսիրեմ քեզ,  
 Իսկ հիմա նայիր՝  
 Ինչպես է  
 Կործանվում օրը  
 Մեր սպասումի պատերին,  
 Չգիտեմ  
 Երկաթից է սերը,  
 Թե մետաքսից,  
 Բայց խելահեղ ծանր է,  
 Երբ չկա,  
 Եվ թեթև այնպես,  
 Երբ գիրկս է ընկնում,  
 Վաղն էլի  
 Կփնտրեմ քեզ,  
 Երբ կանցնի գիշերն այս  
 Խելագարության:


5. Աչքերս բացում եմ,  
 Չարթնի՛ր,  
 Թեև գիտես  
 Օրն էլի հարբած  
 Ընկած է քախտին  
 Երեկ ծխախոտ վառեց,  
 Բողոքեց նրանից,  
 Ում Արման են կոչում,  
 Քարշ եկավ  
 Կանանց հետ,  
 Նրանց հետ,  
 Որ վատնել գիտեն  
 Չտեղավորվող դատարկությունը,  
 Մի քանիսի հետ  
 Դատարկեց համբերությունը  
 Շղթայված լեզվի,  
 Ու երբ վերադարձավ,  
 Կրկին հիշեց,  
 Թե քեզ հետ  
 Միրել գիտեր ժամանակը,

Թե քեզ հետ  
 Բացում էր  
 Աչքերը զարդարված երջանկությամբ:  
 Էլի հիշեց քեզ:  
 Եվ ունայնությունը  
 Կողքիս մնաց:

6. Մարդ կարող է ապրել  
 Ինչպես քարը,  
 Գցեն անապատ,  
 Կխանձվես արևից,  
 Ծովում կթրջվես  
 Ջրի գալարվող մարմնին,  
 Ժայռին փշեր կբուսնեն վրադ,  
 Քամին կփչի  
 Բոլոր ճեղքերից,  
 Ճահիճում կնեխես  
 Որդերի հետ,  
 Ու կկռաս գորտերի հետ  
 Դատարկության մասին,  
 Ու էլի կասրես,  
 Էլի կժպտաս,  
 Վերջը կգտնես մաքառումների,  
 Բայց երբ ծակ է ներսդ,  
 Դու ես փչում  
 Բոլոր ճեղքերից,  
 Դու ես փշոտում  
 Բոլոր ժայռերին,  
 Բոլոր ճամփեքին  
 Մոլորություն ցանում,  
 Երբ ծակ է ներսդ,  
 Օրը ուրվական է,  
 Որ քրքջում է շուրջդ:

7. Ես մոլորվեցի,  
 Քաղաքը տնքում էր  
 Գրկիս մեջ,  
 Ձեռքերիս մեջ  
 Ջրածոկում եմ  
 Հորիզոնները,  
 Որոնց այդպես էլ  
 Չգտա,  
 Մի՞թե եղել ես դու,  
 Երբ անդունդի պատերին  
 Լույս էի նկարում,  
 Ես ինքս ինձ  
 Կուլ եմ տվել 1000 անգամ,  
 Եվ անորոշությունը  
 Վաղուց դարձել է  
 Ապրելու ժամանակ  
 Ինպեսների համար,  
 Ում աստվածը  
 Հավերժ քառսն է:  
 Մի՞թե եղել ես դու,  
 Երբ բառերը  
 Լցվել են գլխիս  
 Ու բոլորը  
 Կոչել են  
 Լռություն,  
 Ես այնքան կիսատ եմ եղել,  
 Որ հույսի ժայռերին  
 Թաքնվել եմ միշտ,  
 Հագուստ եմ գործել  
 Ցեցոտ հավատից,  
 Ու ինձ չեմ կորցրել,  
 Ու քեզ չեմ լքել:  
 Մի՞թե չես գալու էլ,  
 Երբ հյուսիսից  
 Ու հարավից գատ  
 Ես քառսի  
 Բևեռն եմ կորզել:

8. Բառեր կան,  
 Որոնց փշաքաղությունը  
 Մի անգամ ես ապրում,  
 Հետո գլուխդ դնում ես բարձին,  
 Ու հուշերը ստվերի պես  
 Հետևում են  
 Կորած հանդիպումներիդ:  
 Բույրեր կան,  
 Որոնց թավիշը  
 Միրածո կնոջ պատկերով  
 Մի անգամ է հեքդ լցնում,  
 Հետո ուրիշ քնքշությամբ  
 Շոյում ես մագերը  
 Մեկ ուրիշի,



## ԱՐՄԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Պարանոցին նկարում  
 Համբույրները մետաքսի,  
 Բայց ոչինչ  
 Մրտիդ չի դիպչում երբեք:  
 Վախեր կան,  
 Որոնց թողած լիությունը  
 Շատ ավելի  
 Կյանքի է նման,  
 Քան խաղաղությունը:  
 Օրեր կան,  
 Որոնց դատարկությունը  
 Շատ ավելի վերջի է նման,  
 Քան ինքը՝ մահը:

9. Դու հանկարծահաս  
 Պայքուն ես  
 Իմ երկնքում,  
 Ու առանց քեզ  
 Ողնաշարս  
 Փշուր է լինում,  
 Տղամարդիկ սովոր են  
 Չհիշելու  
 Անունները նրանց,  
 Ում հետ չափշփել են  
 Փողոցները  
 Մայիտակ լուսնի տակ,  
 Իսկ ես քո անունից  
 Խորան եմ կարգել,  
 Ուր քայլում եմ  
 Հոգիները նրանց,  
 Որ փնտրում են սեր:  
 Ինձ մի ողջ հավերժություն  
 Դատարկել են  
 Մի ակնթարթ քեզնով լցվելու,  
 Ու հիմա չգիտեմ՝  
 Ինչպես քամել ժամանակը,  
 Երբ դու չկաս,  
 Չես գալու,  
 Երբ ամեն օր  
 Պայքում ես ներսս  
 Ու լռում:

10. Եկա Ղարաբաղ,  
 Ու հասկացա,  
 Որ Միլանից ու Փարիզից  
 Ինչ էլ ձևեն,  
 Միակ զգեստն այստեղ  
 Համազգեստն է:

Մովորեցի երկնքում  
 Թռչուն չփնտրել,  
 Այլ թռչող կրակ,  
 Մարերին՝ չհիանալ մշուշով,  
 Այլ հասկանալ  
 Դիրքերում շրջող  
 Մահի լեզուն:  
 Գնացի Ղարաբաղ  
 Ու սովորեցի  
 Կյանքը կրել սեփական հոգում:

11. Դու վերջին կամուրջն ես,  
 Որով հատում եմ դատարկությունը:  
 Ես սովորել եմ  
 Գրել դժգույն օրերից,  
 Իսկ հիմա  
 Կաս դու,  
 Ու միակ բանաստեղծությունը  
 Մարմինն է քո,  
 Որ կծկվում է  
 Ձեռքերիս մեջ՝  
 Մարտուով անհամարձակ:  
 Ես չեմ եղել  
 Նրանցից երբեք,  
 Ում ձեռքերը կոշտացել են  
 Տարբեր անուններ  
 Այստեղ- այնտեղ շոյելիս:  
 Իմ ծաղկանոցում ծաղիկներ եմ տնկել  
 Վայրի,  
 Ու սիրել եմ  
 Բույրերը նրանց,  
 Դու չես եղել  
 Երբեք  
 Հեշտության մեջ,  
 Որ փափկասիրտ եմ  
 Եղյամի նման,  
 Դու, որ անտառների  
 Մութն ես կրում  
 Ու լռությունը  
 Սևաչ ձորերի,  
 Վերջին կամուրջն ես,  
 Որով շոշափում եմ  
 Կյանքը,  
 Երբ իմ սիրտը փուշ է,  
 Իսկ դու՝  
 Այնտեղ ծաղիկ:

1. «Երևան»՝ նկատի է առնված  
 Թարախի համանուն երգը



# Սիլվիա Փլար

## Պերսևս

Հնարամտության հաղթանակը  
տառապանքի հանդեպ  
Գլուխն է միայն քեզ ի ցույց դնում անսովոր  
կերպով մարտելիս այն,  
Ինչ դարեր են պետք մարտելու համար՝  
Ցավի հնոտի քանդակ մամոնտին՝  
Անմարտելի այնքան, որ կետի փորոտիքում  
Խառն անցքեր կբացի ու արնաքամ կանի  
Աղի ծովերում. Հերկուլեսի արածն ինչ էր որ՝  
Ախտ էր լվանում. մանկան արցունքն էլ  
կիերիքեր դրան,  
Բայց ո՞վ կհանդգներ կուլ տալ Լակոոնին,  
Մեռնող գալլին ու Աստվածամոր  
պատկերներն անթիվ,  
Որ փտում են Եվրոպայի մատուռների,  
Թանգարանների, դամբարանների  
դժգույն պատերին: Դու,

Դու,

Որ ոտքերիդ փետուրներ ունեիր, այլ ոչ արճիճ,  
Ոչ գամ, և մի հայելի, որ օձի գլխից  
Քեզ կպաշտպաներ, խաբեցիր  
Գորգոնա-ծամածռությանը  
Մարդկային վշտի. վերջույթները քարացնող  
Հայացք՝ ոչ Բազիլիսկ-թարթում,  
ոչ կրկնակի պատվար,  
Այլ հանրագումարը վերջին խոնչոց-հոգոցների,  
Ծիչերի ու հերոսապատման,  
որով անհամար ողբերգություններն են  
Ավարտվում արնաթաթախ այս տախտակներին,  
Ու ամեն մի ծակոց ֆշշացող իժ է՝  
Աչքը քարացնող, ու ամեն գլուխի  
Աղետ՝ կորբայի կուչ եկած կծիկ,  
Իսկ անկումը կայսրությունների՝ հաստ գալար հսկա  
Անակոնդայի:

Պատկերացրու, աշխարհը՝

Որպես կծկված սաղմի գլուխ՝ կնճռոտ, պատված  
Տառապանքներով ստեղծումից ի վեր, ու այն, ահա,  
Քո ձեռքերում է: Ավագն աչքի մեջ կամ բորբոքված  
Մատը կարող են ջղաձգման հասցնել,  
բայց մոլորակը համայն,  
Վշտի վերածված, աստվածների, արքաների պես,  
Ժայռեր է դարձնում:

Ժայռերն այդ՝ ճաքած ու մաշված,  
ծանրանում են ապա,  
Հուսահատություն սփռում երկրի  
Սև դեմքին:  
Թող դիակային կարկանդակները համայն  
Արարումը պատի, թե որովայնն այս բավարար մեծ չէ  
Ուրախությունը կուլ տալու համար:

Դու հայտնվում ես, ահա՝

Փետուրներով զինված, խուտուտ տալու ու  
թռչելու համար,  
Ու մի ծուռ հայելով, որ խեղճ մուսային  
Հատված գլխով դժնի տիկնիկ է դարձնում, մի հյուս,  
Զազիր օձի պես, թուլացած-կախված է,  
ասես անհեթեթ բերանը  
Այտուցված դեմքին: Ո՞ր ես  
Դասական վերջույթները համառ Անտիգոնեի,  
Ֆեդրայի կարմիր, արքայական հանդերձը,  
արցունքածոր  
Թախիծը Մալֆիի քնքուշ դքսուհու:

Կորել են

Դեմքդ ծամածռող կծկումների խորքում, մկաններն  
Ու ջլերը ձգված, հաղթական, մինչ տիեզերական  
Ծիծաղը կսփռվի անամոք, ժանտախտ վերքերը  
Հավերժական տառապայալի:

Քոնն է,

Պերսևս, հաղթանակը, ու թող որ դու նորից ու նորից  
Հավասարակշռես մինչ ժամանակի ավարտը,  
երկնային կշեռքը,  
Որ մեր խելագարությունն ու  
ողջամտությունն է հակակշռում:

## Վիուկի ողջակիզում

Շուկայում չոր փայտեր են կուտակում:  
Սովորների մացառը վատ ծածկոց է: Ես բնակվում եմ  
իմ մոմե կերպարի մեջ՝ տիկնիկի մարմնում:  
Սրտխառնոց. ես վիուկների թիրախն եմ:  
Սատանային սատանայով եմ քշում:  
Կարմիր տերևների ամսում ես հրե մահիճ եմ մագլցում:  
Հեշտ է խավարի վրա մեղքը բարդել՝ դռան բերանը,  
նկուղի փորը: Նրանք իմ կայծը մարեցին:  
Սև թևերով էգն ինձ թութակի վանդակում է պահում:  
Ինչ մեծ են մեռյալների աչքերը:  
Ես մի մագլուց ոգու հետ եմ մտերիմ:  
Այս դատարկ տարայի կտուցից  
ոլորապտույտ ծուխ է ելնում:

Եթե ես փոքր եմ, ապա անվնաս եմ:  
Եթե շարժվեմ, ոչինչ չեմ կոտրի: Բրնձահատիկ եմ՝  
խուփի տակ նստած, աննշան, անհաղորդ:  
Ողջակիզողներին մեկ առ մեկ ոտքի են հանում:  
Իմ փոքրիկ, ճերմակ ընկերներ, մենք օսլա ենք:  
Մենք աճում ենք:  
Սկզբում ցավոտ է: Կարմիր լեզուները  
ճշմարտությունը ցույց կտան:

Բզեզների մա՛յր, միայն բաց արա ափդ,  
ու կթռչեմ մոմի բերանի միջով՝ չխանձվող թիթեռի պես:  
Վերադարձրե՛ք կերպարանքս:  
Ես կհաշտվեմ օրերիս հետ,  
երբ փոշու մեջ թավալվում էի քարի ստվերում:  
Կոճերս այրվում են: Կրակը հասնում է ազդրերիս:  
Ես կորած եմ, կորած այս լույսի հանդերձներում:

## Խելագար աղջկա սիրերգ

Փակում եմ աչքերս, մեռնում է ողջ աշխարհը.  
Կոպերս բացում եմ, այն նորից է ծնվում:  
(Կարծում եմ՝ քեզ հորինել եմ իմ գլխում:)

Աստղերի վալսն է՝ կապույտ ու կարմիր,  
Ու հանկարծահաս մութն է ներս վարգում:  
(Կարծում եմ՝ քեզ հորինել եմ իմ գլխում:)

Երագում ինձ դուրսում էիր դեպ մահիճը,  
Երգում էիր լուսնահար, խենթի պես համբուրում:  
(Կարծում եմ՝ քեզ հորինել եմ իմ գլխում:)

Աստված երկնից ընկնում է, դժոխքի հուրը՝ մարում,  
Ելնում են սերաֆիմն ու Սատանայի դևերը.  
Փակում եմ աչքերս, մեռնում է ողջ աշխարհը.

Թվում էր՝ նորից ինձ մոտ ես գալու,  
Բայց ծերանում եմ, անունդ մոռանում:  
(Կարծում եմ՝ քեզ հորինել եմ իմ գլխում:)

## Գառը մշուշի մեջ

Բլուրները դեպի սպիտակն են հետ քաշվում:  
Մարդիկ կամ աստղերն ինձ  
Նայում են տխուր. հիասթափված են:

Մի գիծ շունչ է թողնում գնացքը:  
Օ դանդաղընթաց,  
Ժանգագույն այդ ձին՝

Սմբակներ, թախծոտ զանգեր.  
Ողջ առավոտ  
Առավոտը սև էր կտրում,

Մերժված ծաղիկ:  
Խաղաղություն է իջել ոսկրերիս, հեռու  
Դաշտերից սիրտս հալչում է:

Նրանք սպառնում են ինձ  
Ճանապարհ բացել դեպի մի երկինք՝  
Անասող ու անհայր, դեպի խավար մի ջուր:

## Սալջարդ

Գույնը կուտակվում է մի տեղում՝ աղոտ բոսոր:  
Մարմնի մնացած մասը ջնջված է,  
Մարգարտի գույն:

Մի ժայռափոսի մեջ  
Ծովը քաշում է մտազարի պես,  
Փոքրիկ խոռոչը՝ ծովերի առանցք:

Մի ճանճաչափ  
Դատապարտման խարանդ  
Մողում է պատն ի վար:

Միրտը փակվում է,  
Ծովը՝ հետ քաշվում,  
Հայելիները ծածկում են սավանով:

## Կակաջներ

Չափազանց զգայուն են կակաջները. այստեղ ձմեռ է:  
Տես՝ ինչ ճերմակ է ամենը, ինչ հանգիստ,  
ինչ ձյունապատ:

Խաղաղություն են սովորում, հանգիստ պառկել,  
Ինչպես լույսն է պառկած այս ճերմակ պատերին,  
մահճակալին, ձեռքերին:

Ես ոչ ոք եմ, ես պայթյունների հետ ոչ մի կապ չունեմ:  
Անունս ու շորերս քույրերին եմ տվել,  
Պատմությունս՝ ցավազրկողին,  
մարմինս՝ վիրաբույժներին:

Գլուխս բարձի ու սավանի արանքն են խցկել,  
Ինչպես աչքը երկու անխուփ, սպիտակ կոպերի միջև:  
Հիմա՛ր թիք, պիտի ամեն ինչ կլանես:  
Քույրերն անցնում են անվերջ շարքերով, հոգ չէ,  
Դեպի ցամաք թռչող ճայերի են մնամ՝

սպիտակ գլխարկներով,  
Ձեռքերն աշխատում են, ճիշտ մեկը մյուսի պես,  
Ու անհնար է նրանց թիվը ստույգ ասել:  
Նրանց համար խճաքար է մարմինս, որ խնամում եմ,  
Ինչպես որ ջուրն է քնքշորեն փարվում իր մեջ  
լողացող խճաքարերին:

Պապրուն ասեղներով ինձ ընդարմացում ու  
քուն են բերում:

Կորցրել եմ ինքս ինձ, հոգնել եմ այս բեռից՝  
Իմ արհեստական կաշվից ճամպրուկը՝

սև դեղատուփի պես,  
Ընտանեկան նկարից ժպտացող

ամուսինս ու երեխասս,  
Որոնց ժպիտները կեռիկների պես  
մաշկիս մեջ են խրվում:

Բաց եմ թողնում ամենը՝ բեռնանավը երեսնամյա,

Որ համառորեն անունիցս ու հասցեիցս է կառուցել:  
 Ինձնից սրբել-մաքրել են այն ամենն, ինչ սիրում էի:  
 Կանաչ պլաստիկաբարձ սայլակին պառկած՝  
 սարսափած ու մերկ,  
 Նայում էի՝ ոնց են տեսադաշտից կորչում  
 իմ թեյի սպասքը,  
 Սպիտակադենի դարակներն ու գրքերը, մինչ գլուխս դանդաղ  
 անցնում էր ջրի տակ:  
 Միանձնուհի եմ այժմ՝ առավել մաքուր, քան երբևէ:  
 Ծաղիկներ չէի ուզում, ուզում էի միայն  
 Ձեռքերս մեկնած պառկել ու բոլորովին դատարկ լինել:  
 Չգիտեք էլ, թե որքան ազատ եմ,  
 Որքան մեծ է ինձ շլացնող անդորրը,  
 Ու փոխարենը ոչինչ չի ուզում՝ անվանապիտակ,  
 փոքրիկ կախազարդ:  
 Դա մեռյալների անդորրն է վերջնական, որ կուլ են տալիս,  
 Ինչպես հաղորդության նշխար:  
 Չափազանց կարմիր են կակաչները, ցավեցնում են ինձ:  
 Թղթի միջից անգամ, ինչպես ճերմակ բարուրից,  
 Լսում եմ՝ ոնց են ահարկու մանկան պես նրանք թույլ շնչում:  
 Բոսորը նրանց համահունչ է վերքիս ու այնքան ներդաշնակ:  
 Լողում են նրանք այնպես նազանքով,  
 թևն ճնշում են իրենց ծանրությամբ,  
 Անսպասելի լեզուներով, իրենց գույնով, ու փաթափում են վզիս  
 Տասնյակ կապարե գնդիկների պես:  
 Ինձ առաջ չէին հետևում, հիմա հետևում են:  
 Կակաչներն ինձ հսկում են, ու պատուհանն իմ հետևում,  
 Որտեղ օրը մեկ անգամ դանդաղ լայնանում ու նեղանում է լույսը,  
 Ու ահա ես՝ ծիծաղելի, թղթից մի ստվեր  
 Արևի աչքի ու կակաչների աչքերի միջև:  
 Ու ես դեմք չունեմ, ուզում էի ջնջել ինձ:  
 Վառ կակաչներն իմ թթվածինն են ուտում:  
 Նրանց գալուց առաջ օդը հանգիստ էր,  
 Շունչ առ շունչ, խաղաղ ու կանոնավոր:  
 Կակաչները օդն աղմուկով լցրին:  
 Ու հիմա օդը նրանց շուրջ փոթորկվում է, ինչպես որ գետը  
 Իր մեջ սուզված ժանգակարմիր շարժիչի շուրջ:  
 Նրանք սևեռել են ուշադրությունս,  
 Որ առաջ ցրված դես ու դեն էր խայտում:  
 Պատերը ևս սաես ջերմանում են:  
 Կակաչները պիտի վանդակում լինեն, վտանգավոր գիշատչի պես,  
 Նրանք բացվում են, ինչպես երախը հսկա աֆրիկյան կատվի,  
 Ու ես զգում եմ սրտիս զարկերը, որ բացում-փակում է  
 Ինձ սիրով զգվող իր կարմիր գավաթը:  
 Տաք ու աղի է ջուրը, ծովի պես, ու գալիս է մի եզերքից՝  
 Հեռավոր այնքան, որքան առողջությունն իմ:

**Տարիներ**

Հայտնվում են նրանք՝ հանց կենդանիներ  
 Փշարմավից դուրս, ուր հասկերը  
 Բնավ մտքերը չեն, որ վառում են Յոգի պես,  
 Այլ համակ կանաչ, անխառն խավար,  
 Որ պաղ են ու կան:

Ես քեզ նման չեմ, Աստված,  
 Անիմաստ, սև դատարկիդ մեջ՝  
 Հիմար, կայծկլտուն աստղերով պատված:  
 Հավերժությունը ճանճրացնում է ինձ:  
 Չեմ ուզել երբեք:

Իսկ ի՞նչ եմ սիրում՝  
 Մխոցը շարժման մեջ:  
 Ու նրա առջև մեռնում է հոգիս:  
 Ու սմբակներն եմ սիրում ձիերի,  
 Նրանց անողորմ խառնիճադանջը:

Իսկ դո՞ւ, մե՞ծ Անդորր,  
 Այդ ինչի՞ մեջ է մեծությունը քո:  
 Վա՞զրն է այս տարի, որ մռնչոցով բախում է դուռը:  
 Ոմն Քրիստոս է,  
 Որ զարհուրելի

Աստվածախայթն է իր մեջ կրում,  
 Որ չի համբերում՝ երբ պիտի թռչի ու վերջ տա ամենին:  
 Ինչ լուռ եք, արյան հատապտուղներ:

Չեն հանդուրժելու սմբակները,  
 Կապույտ հեռուներում մխոցներն են ֆշշում:

**Թարգմանությունը՝  
 Ռուզաննա ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ**

**«Կոճակներն արչակվելուն պես  
 մաշկն է սկսվում,  
 իսկ մաշկն ավարտվելիս՝  
 կոորդինատները»:**

«Մաշկը» (Deri, Yasakmeyve, 2017) հայկա-  
 կան արձատներով ժամանակակից թուրք բա-  
 նաստեղծ Նիհաթ Օզդալի (Հալֆեթի/ Ուրֆա,  
 1984թ.) հայտնի եռապատումի («Կոճակներ»,  
 «Մաշկ» և «Կոորդինատներ») երկրորդ գիրքն  
 է, որի համար 2017 թ. հեղինակն արժանացել է  
 «Ոսկե դափնի» գրական մրցանակի:

«Կոճակներ» (Düğmeler, Yasakmeyve, 2015)  
 ժողովածուն բաղկացած է 50 «կոճակ» բա-  
 նաստեղծությունից, որոնք «արձակելիս» մեր-  
 կանում է մարմնի որոշակի հատված: Վերջին  
 բանաստեղծությունը յուրատեսակ նախեր-  
 գանք է «Մաշկ» ժողովածու համար՝

**վերջին կոճակ**  
 կոճակները վերջանան՝ դու կսկսվես...

«Մաշկի» 62 բանաստեղծություններն ամ-  
 փոփված են երեք բաժնում՝ **վերնամաշկ, մաշկ  
 և ենթամաշկ**: Ստեղծագործությունների առա-  
 ջին տարբերակները գրի են առնվել մաշկի վրա  
 աշխարհի տարբեր ծայրերում: Գրքի վերջին բանաս-  
 տեղծությունը կրում է երրորդ գրքի անվանումը՝ «Կոոր-  
 դինատներ»:

Ներկայացվող բանաստեղծությունները ընտրված են Ն. Օզդալի «Մաշկը» գրքից. հայերեն են  
 թարգմանվում առաջին անգամ:

**Զարկերակ**

Կասկածը շատ քիչ տեղ է թողնում  
 աննահանջ համակույմի արտահայտման  
 համար: Մարդը երբեմն պետք է աչքերը ձիգ  
 կապի: Վախն ու հույսը ճակատագիրը մաշկիդ  
 վրա գծագրելուս չափումներում շարունակվում  
 են: Իմացյալ և հանկարծակի ձեռք բերվող  
 համաձայնություններ կան:

Ոտքի հանած ջանքերս մե՛ր իսկ կանգնած  
 տեղն անիմաստ են դարձնում:  
 Արդյո՞ք զարկերակն անցում է:

**Գոյություն**

Լաբորատորիաները միշտ մի շրջան  
 ծանրաբեռնված են լինում, մինչդեռ  
 մաշկիդ վրա սկզբնավորվող կյանքը  
 մշտապես գոյության պատճառ է:  
 Եզմված մասերումդ մի նուրբ կոր էր  
 գծագրված:

**Չողն ու Նանան**

Եթե ճամփա ընկնելու լինեք, ուղևորվելու  
 վճռականությունը պետք է արժանի լինի  
 հանդիպումների բույրին, որոնք ստիպված ենք  
 իրագործել:

Արդյո՞ք նանան բույր է:  
 Նրա՛ կորսվելն անկարևոր համարող  
 կեղցված աչքերը, որ կիսադեմից ավելի  
 խավար լուսանկարներին կկարողանան մայել  
 առանց ժպտալու,

ճիշտ այն ժամանակ, երբ ես մոտենամ  
 կզգում, ուր կլողամ երջանկությունս արարելու  
 համար:

Մենությունն ու գծությունը  
 կարո՞ղ են, արդյոք, երկունքին, որ առաջին  
 անգամ է հողին ողջունում,  
 իրենց խոսքը հասցնել:  
 Մատներս կտրեցի և  
 չքայլեցի անգամ այնտեղ, ուր հասնելու էի,  
 թեպետ թռչելն ինքնին ճանապարհ էր այդ  
 պահին:

**Գոյ**

Համայնն իր մեջ ամփոփողը գոյն է:

**Կոպերը**

Կյանքը սկսվում է թռչնի ձվերում  
 կեղևի ուսումնասիրությունից: Այս  
 նպատակով ամենահեռուն թռչողն է, որ  
 այլոց համար գոյություն ունեցող ամեն բան  
 կխամրեցնի:  
 Ամենաքիչ սպասածը տեղերում անգամ՝  
 կոպերիդ,  
 ժպիտ են նկարելու:



**Նիհաթ Օզդալ**

**Քուև**

Երբ արթնանաս, քունս կավարտվի՞:

**Նորեն**

Լռեցիր:  
 Աշխարհում ենք նորեն:

**Մելանին**

Ես մի ստվեր եմ սոսկ, քեզնից ինչպե՞ս  
 բաժանվեմ:

**Արանք**

Աշխարհի ու իմ արանքում մաշկդ դրի:

**Սպասել**

Մաշկ ունենալդ առաջին անգամ ե՞րբ  
 զգացիր:  
 Գույների ընկալումդ, ճանաչողությունը,  
 ջանքը, քրտինքը, պակասելը, սպասելը...  
 Դաժան է և հանկարծակի:

Եթե կա ինչ-որ բան, ինքդ քեզ  
 դաստիարակելուց ձեռք քաշելուցդ հետո միայն  
 կքաղցրանա:  
 Ինտելեկտուալ ինստալյացիա, բաղադրիչը՝  
 սեր:

**Չանդիպման ծառը**

Ժամանակի՛ ինքն իր հետ հյուսած կապը  
 քանդեցինք:  
 Դու ծառի՛ն նայիր,  
 Ազդավից առավել սև մի ծիտ որպես՝  
 Ես ճյուղերդ կդառնամ:

**Կոորդինատներ**

Նրա ճամփին հայտնվես էլ, նրա ճամփից  
 չքանաս էլ,  
 միևնույն է,  
 ճամփան կտրած կլինես:  
 Համաձայն եմ, եթե ծովն է երկնում տեսել,  
 մի փետուրն անգամ բավական կլինի  
 քաղաքներն իրար փարելու համար:  
 Թռչնից ձգածս նախշերն անտեսանելի  
 դարձան:  
 Մոլորությունն իմ ու մեղքս ինքս էլ զիտեմ:  
 Երբ մաշկը մեռնի, ցամաքի  
 սանդղահարթակներում կմնան միայն  
 Կոորդինատները:  
 Նրանց կարող ենք ապավինել:

**Թարգմանությունը՝  
 Կառուլիկա ՍԱՀԱԿՅԱՆԻ**



# ԱՅՈՒՆԵ ՍԵՎԱԴՂԱ

«Նոր տարին ընտանեկան տոն է: Տասներկուսի զարկերի հետ մենք մտովի ամփոփում ենք անցածը և բաժակ բարձրացնում՝ նայելով իրար աչքերի մեջ: Ըն-

Մեշոկները լցնում էր, ոտքերի վրա ամուր կանգնելով՝ գլուխը բարձրացնում խարխուլվող շինության դեմքին, միհարած հիմքերին ասում՝ պետությունն է մեղավոր, թող մեզ լավ կյանք տար, ինչո՞վ եմ էս շենքի տիրոջից պակաս, էդ ինչի՞ ինքը պիտի լավ ապրի, ես՝ չէ:

Մի տարի առաջ հավեր ունեին: Խմած եկավ, մորթեց, թափեց շենքի ա-

որոշմամբ. փողկապավոր հետույքները չոր տեղ նստելու սովոր չեն: Վարդանն էլ սպիտակել էր, մազերի պես խամրած, բայց վատ արդու-կամ վերնաշապիկներ էր հագնում, որդու՝ իր կողմ շարտած ու թռչակից մնացած կոպեկները հաշվում ու հեռուստացույցին կյանք սովորեցնում. «Քանդեցին հայրենիքս, էսքան աշխատես ու ոչ մի բանի չհասնես, լափեցին, կերան, ժողովուրդս սոված սատկում ա, էս ինչ երկիր ա: Թալանեցին պոռնիկները»:

Ու ոչ մի գողացած ցեմենտի տոպրակ չկարողացավ ասել, որ Վարդան, ցեմենտ ու հողակտոր այլոց հանձնելու, ուրիշի բաժին նպաստը կամ կոշիկը թոցներու մեջ տարբերություն չկա: Ինքը թեզ մի հայիոյի, մեջքդ կցավի, դեռ շատերի առաջ պիտի կռամաս ու չորես, բունը դա է: Ու պետությունը մեղավոր չէ:

«Մենք մտնում ենք ոչ միայն նոր տարի, այլև մեր երկրի ու հասարակության զարգացման նոր փուլ: Հավատում են, որ արձանագրելու ենք նոր ձեռքբերումներ մեր պետության ու հանրության գործունեության բոլոր ասպարեզներում»:

լու, որ շատ ավելի բարձր նպատակներ կան: Ես իմ անձնական որոշումը վաղուց եմ կայացրել՝ անել ինձնից կախվածը արատավոր կարծրատիպից հրաժարվելու, իրոք ազգային և իրոք պետական մոտեցման սկզբունքները քաղաքական կյանքում արմատավորելու համար: Չեմ քաջցնի՝ օգնության կարիք էլ եմ ունեցել և ունեմ»:

## Հատված նախագահի ամանորյա ուղերձից:

Փորը քորեց, հայրենանվեր հորանջեց. պետ-ական-ուրյուն: Անունը հուշում է, որ նախ, պիտի պետ լինես՝ «կառավարիչ» իմաստով: Դե հա, ով կառավարում է, նրա գործերն էլ լավ են: Հաջորդը, «ական»... Դե, հա, պիտի սարսափենք քեզնից՝ ինչպես գինամթերքից են վախենում: Ու հենց քեզ տրորեն, պիտի պայթես՝ ոչնչացնելով բոլորին: «Ուրյուն» էլ դե ինչ, եթե պետ ու ական չես, ուրեմն հասարակ մի վերջածանց ես՝ անպիտան, անհասկանալի, անզան բացատրություն չի ստացվում հորինել:

Հոգնեց հայրենիքի փրկության հարցերով զբաղվելուց. ում ընտրել են, թող նրանք էլ զբաղվեն, այս կյանքում ամեն ոք պետք է իր տեղում լինի: Ծածկոցը վրա քաշեց, խռացրեց: Հեռուստացույցն անջատվեց, ու հայրենիքը բազմանշանակ լռեց ձեռք փողկապավորի վրա. թող քնի: Ցավոք, նա էլ է իրեն պատկանում, իսկ «քոնոնցական» մարդ-

# ՊԵՏ-ԱԿԱՆ-ՈՒԹՅՈՒՆ

տանիքներում, ինչպիսի սեղանների շուրջ էլ դիմավորենք նոր տարին, իրար նեցուկ լինելու խոստում կա յուրաքանչ-յուրիս մտքում: Երկիրն էլ մեր բոլորի ընտանիքն է: Որտե՞ղ ենք դնում վերջակետ ու ի՞նչ նպատակներով ենք անցնում նոր տարվա սահմանագիծը»:

## Հատված նախագահի ամանորյա ուղերձից:

Վարդանի համար շինարարածքից մեշոկով ցեմենտ գողանալը դարձել էր աշխատանք, բուն շինարարությունը՝ հորբի: Ամիսը մեկ-երկու անգամ խղճի հետ ընթրելիս ասում էր՝ ամենաքիչը ես եմ տանում, տարածս էլ ցեմենտ է, հըր դու նայի՝ ուրիշներն ինչեր են գողանում, բա ի՞նչ անեն, հանձնում են, ընտանիք են պահում: Ընտանիք պահելու մեջ վատ բան կա՞, չկա: Դե վերջ:

Եթե սահմանված բաժնից շատ ցեմենտ էր թոցնում, ասում էր՝ պետությունն է մեղավոր, որ էս օրին եմ հասել: Թող մեզ լավ նայեր, մենք էլ նման քայլեր չանեինք: Թող բյուջե տար (կոնկրետ չէր հասկանում՝ ինչ է դա, հեռուստացույցի էն կինն ասել էր, ինքն էլ կրկնում էր), մարդավարի ապրելիքը: Բա ես սենց կյանքի՞ եմ արժանի: Թող պետությունը լավ գործ տար՝ աշխատեի:

Մայրն ուսմավարի առաջ երեկոները պարբերաբար ու շատ երկիմաստ չորքելով մի կերպ ատենատատ վաստակեց Վարդանի համար: Պրոֆտեխտումնարանում գրագով միզել էր լսարանի անկյունում, ընկերը տնօրենի սենյակում անունը ցածրաձայն, բայց հստակ արտաբերելով հանձնեց հեռացման թղթերին: Ծինջոկատ մտավ: Հարևան աղջիկ ունեին, հետը գույզվեց, երկու տղա արտանետեցին աշխարհ:

«Իմ հարազատ երկրի մեծ ընտանիքի սիրելի՜ անդամներ, մենք ընդհանուր շատ ավելին ունենք, քան կարծում ենք»:

## Հատված նախագահի ամանորյա ուղերձից:

ուսջ: Կնոջ մղկտոցը լռեցրեց ցախի հարվածով: Կինն ի պատասխան բաբուն ծախսեց Վարդանի հորից մնացած ժամացույցը: Ասաց՝ գողացել են, ուրիշները մույնպես վատ են ապրում: Հայրենիքը թող հոգատար լինեք, չգողանալին: Անթարթ ասաց, հայրենիքի հոգեառի վստահությամբ, ու Վարդանը հավատաց:

Մի օր շուտ տուն եկավ, տեսավ՝ երեխաները բակում խաղում են. ութ տարեկան տղան վեց տարեկան եղբորն ասում է. «Ես պապյան եմ, դու՝ բ-ի տղեն, անունը տենց ա Գարո ձյալի, մաման ա ասում: Հիմա էս ցելոֆանների մեջ հող կլցնեն, կբերեն քեզ, կհանձնեն, դու վեկալում ու ինձ ասում ես՝ խի՞ ես տենց քիչ բերել, այ համբալ, չեմ ասե՞լ չորս մեշոկ կհավաքես, նոր կերևաս: Դե ռադ էլի, կհավաքես, կգաս»: Տեսածից հետո կնոջ հետ խոսելիս սենյակի դուռը սկսեց փակել, որ երեխաներն էլ չլսեն: Խղճի հոգեհացին արդեն բացատրեց՝ ինչու. թող չմտածեն, թե շենքերի վրա միայն ցեմենտն է տանելու բան, էս աշխարհում մենակ գաջը չի, պանելները չեն: Բայց դե ո՞վ է մեղավոր, որ ես ցեմենտի գող եմ: Ծիշտ է, պետությունը:

«Մենք սիրում ենք շեշտել, որ հայերը հին ու հզոր մշակույթի ժառանգորդներ են, և դա ճիշտ է: Բայց փաստ է նաև այն, որ ներկա Հայաստանում շատ բան անկատար է»:

## Հատված նախագահի ամանորյա ուղերձից:

Երեխաները ծանրակշիռ գողեր չդարձան, որովհետև ցեմենտի մեջ ու համար են մեծացել: Մեկի բախտը բերեց, քրտնած թևատակերին փողկապ էր հարմարեցնում, որը հետո օգտագործում էր չորս օրական կարկանդակի ձեթը վատ սափրած դեմքից մաքրելու համար: Տան բազմոցը իրեն նվիրեցին՝ երբ կնոջ հետ գույզվում էր՝ երեխաներ արտանետելու

## Հատված նախագահի ամանորյա ուղերձից:

«Ես իմ հորից բախտավոր եմ, ազատ երկրում եմ ծերանալու»,- մտածում էին Վարդանի երկու տղաները՝ մեկը փողկապավոր, մյուսն՝ անփողկապ, բայց էլի ձեթը հագուստով մաքրող: Օր օրի ծերանում էին, բայց ֆինանսական ու բարոյական ազատություն չէին ստանում: Աչքները լայն-լայն չույն էին շորորացող Հանրապետության վրա ու ճպճապցնում. ինչո՞ւ ոչինչ չի ստացվում, կարծես թե՛ ամեն բան ճիշտ են անում: Թծում են, շողորթում են, կռանում են, թե պետք լինի՝ կգում են, բայց ավելի շատ գողանալ չեն կարողանում: Ազատությունը կա, պետականությունը՝ հետը, բայց երկուսի ներկայությունն էլ իրենց համար շահավետ չէ:

Փողկապավորը հերթական օրը գլորելիս որոշեց զբաղվել նրանով, ինչով հարմար է զբաղվել բազմոցին փռված՝ կնոջը հայիոյելով հրամաններ տալու և հեռուստացույցի ալիքները թերթելու արանքներում. պետությունը փրկել: Թե չէ՛ էսպես հնարավոր չի, կերակրատաշտը կա, բայցմոտ չեն թողնում: Եթե իր արածներից փոփոխություն չկա, ուրեմն՝ հայրենիքի հետ մի բան այն չէ: Չէ, ինքը հո չի՞ բողոքում, որ երկրում անարդարություն և թալան է, ներսի անհնազանդության պատճառը անարդարությունն է, որն իրեն չի շրջանցում, իսկ լավ գողոնը՝ հակառակը՝ շրջանցում: Բայց եթե այսքան երկար պայքարել ենք պետականության համար, ուրեմն՝ շատ անհրաժեշտ է մեզ: Այն, ինչ անհրաժեշտ է, պիտի հիմնավորում ունենա, հիմնավորումն էլ՝ բացատրություն:

«Ընտրությունները մեզանում շատ դեպքերում ընկալվել են, կրկնում են՝ ընկալվել են, միայն որպես իշխանություն ձեռք գցելու կամ իշխանությունը պահելու միջոց: Վաղուց ժամանակ է ըմբռնե-

կանց հանգիստը կարևոր է, չի կարող բունը խախտել: Ու ոչինչ, որ իր, ինչպես անկախության չոչ անելու տարիներին հայտնի երգում էր ասվում, բռի հողը, ծաղկի թերթն ու բազկի մի զարկը երբեք չի հասկանա, որ «պետականություն» բառի «պետը» նշանակում է պետական լինել երկրի: Հետո, պիտի ական լինես, զենք՝ երկրի ձեռքին, սիրով ու խելացիությամբ պաշտպանելու, փոխելու ու հզորացնելու համար: Ական կարող է լինել լավ գրիչը, ամեն օր ցեխտավոր բառը, սուրճ պատրաստելիս գիտակցություն ծակած գաղափարը, սիրո խոստովանությունը՝ սառած ձեռքերը գրպաններում տաքացնելու ընթացքում: Իսկ «ուրյուն» ուղղակի հիշեցում է. բոլորս բառ-կյանքի վերջում դառնալու ենք մույն հողաթունը-վերջածանցը, կարևոր է կյանքի վերջածանցին հասնելուց առաջ մեզ ուղղորդող ճիշտ բառարմատներ գտնել:

«Շնորհավորում եմ ձեզ Ամանորի և Մուրթ Ծննդյան տոների առթիվ: Մաղթում եմ, որ այս օրերին տոնական սեղանների շուրջ իշխեն բարձր տրամադրությունն ու լավատեսության ոգին: Թող՝ Նոր տարին խաղաղություն և բարօրություն բերի ձեր ընտանիքներին ու մեր երկրին»:

## Հատված նախագահի ամանորյա ուղերձից:

Անցեմենտ շենքերն ու մարդիկ քանդվելու են մի օր՝ տեղը զիջելով ամուր արմատներով կառույցներին ու անհատներին: Գողոնով գնված հագուստը մաշվելու է՝ իրենց տերերի հոգու նման փալաս դառնալով: Հիմնապատերից թոցրած ամեն մի տուֆ ծանր քար կղառնա վաղամեռիկ խղճի վրա, և օդում հարց կմնա կախված՝ ճիշտ-ճիշտ Վարդանի որդու փողկապի նման վիզ խեղդող. ինչո՞ւ էին փորձում խուրդել երկիրը:



# ՀԱՍ ՉԱԽԱԼՅԱՆ

## Քրաժեշտ

Ամեն քայլ հեռացնում է մեզ, և որովհետև կանայք սիրում են արցունքները. ես կատեն... և կհագնեմ քեզ ամեն օր, մինչև մաշվես...

\*\*\*  
Աստված սիրում էր, այն արցունքները, որոնք ես էի քարանձավում կարմիր, ուր գիշերը առասպել էր հեռում, որովհետև կես կանգառ այն կողմ՝ ձմեռ էր անշուր և մի ստվեր լիզում էր ինքն իրեն...

\*\*\*  
Դու վերջին ձուկն ես ցամաքում, և թռչունը՝ ջրերում դեղին, ում մեջ փշրվեց սեփական հայելին...

\*\*\*  
Տեղավորվի բառերի արանքում, և որովհետև վերջին հուրան իսկ վաճառվեց... չկա արքայություն երկրի և երկնի միջև, երբ մատնաչափ է մարդը, ով գողգոթայում չի արնահոսել...

\*\*\*  
Մանուշակագույն կին, ասեղնագործի քեզ բարձին երանության, բայց չքնեն փշալարի վրա, ուր Աստված իր շորերը կախեց...

\*\*\*  
Բանաստեղծությունը ձյուն է, ցեխոտ ոտքերի տակ, ուր մեկը թաքնվում է, որ իրեն գտնեն...

\*\*\*  
Ճերմակ է ժամանակը, երբ հոսում է հայելիների մեջ, ուր մարդիկ բառակույտ են.....

## Երևան

Իմ սրտի կարմիր ժայռակներին, արնահոսում էր ձմեռը՝ ոտաբոբիկ փաթիլներով, և հուշերի մետրոյում սառում էր մի քաղաք, որի գնացքն էի ես...

\*\*\*  
Մենք տողադարձում ենք մեր հոգին և մոռանում մարմինը, բայց չգիտենք քանի՞ կաթիլ էր երջանկությունը, երբ ջրափոսում կարոտ էր հոսել...

\*\*\*  
Կանայք չվում են առանց երկտողի, երբ հիշողության դռան տակ չարդուկված սիրտ և համբույրների վերնաշապիկ են թողել...

\*\*\*  
Կինը հագնում է մեմուրյան գուգագուլյան, երբ ունի ոտքեր և ոչ՝ հեծանիվ երջանկության...

\*\*\*  
Մի ծեծեք այն կործքը, ուր ես եմ... և ուր դուք եք, չէ՞ որ Աստված տեղավորեց բոլորիս իր մաշկի տակ և արդուկեց...

\*\*\*  
Երբ կորավ անձրևանոցս, հասկացա՝ ամենաբաց կարոտն եմ գտել, որից մի արցունք կավելանա հոգուս կախիչին և ամեն կորածով ես կպակասեմ...

\*\*\*  
Երազանքների անվասայլակը կարող է թռչել, երբ նրա վրա քիթեռ է նստած...

\*\*\*  
Հրեշտակները լալիս են հիշողության առաստաղի մոտ... երջանկության ծաղկամանը դատարկ է...

\*\*\*  
Ես ուզում եմ թաքնվել ժամացույցի ետևում... ինչու՞ է չվում ժամանակը, երբ դեռ աշունը չի եկել...

Կամրջի մյուս ծայրից շարունակ շան հաչոցներ էին լսվում, երբ ես, հասնելով աստիճանների մոտ, իջա կամրջի ստորին հարթակը: Գետնին թափված էին ապակե 22երի բեկորներ, որոնց առատությունը վկայում էր, որ այստեղ գիշերային արկածները հաճախ են բուռն ու պայթյունավտանգ լինում:

Միրահար գույզն արդեն ամբողջովին ընկղմվել էր տարվանքի մեջ, երբ ես, մյուս ծայրից քայլելով դեպի իրենց, հանկարծակիի բերեցի նրանց, իսկ նրանք տեսնելով իմ կերպարանքը, շտապեցին լքել իրենց կրքի վայրը՝ չմոռանալով ինձ մարդկության բոլոր մեղքերի մեջ մեղադրող հայացքի արժանացնել: Հետաքրքիր է, որ կես ժամ առաջ սիրահարների կանգնած տեղից ընկերս իրեն ցած է նետել դեպի պայծառ անհայտություն: «Չույզը հաստատ չգիտի այդ մասին, պետք էլ չի, որ իմանա. նետել է, իր պորբեմն է, իրենց հետ կապ չունի», - մտածեցի ինքս իմ մեջ՝ նայելով, թե ինչպես էին երիտասարդները անհոգ տեղափոխվում կամրջի մյուս թևը՝ շարունակելու կիսատ մնացած գործը:

Պատը, որին հենվել էր աղջիկը, լի էր գանազան գրառումներով, ֆիզիկայի բանաձևերով, բանաստեղծական քառատողերով: Կամրջի հենց այդ հատվածից գեղեցիկ տեսարան էր բացվում դեպի ձորը, որի կողքով հոսող գետը ժամանակին կրում էր «Մեռյալ» մականունը, իր մեջ թափվող դիերի պատճառով:

# Մահացած մարդու հեճերով

Մոտ հինգ րոպե էր անցել, ինչ ես հայացքս հառել էի դեպի գետն ու հեռավոր մայրուղին, որ ձգվում էր լեռների միջով դեպի քաղաքի մյուս ծայրը: Երկու ոտիկանների հանկարծահաս հայտնությունը, որ ինքս էլ չհասկացա, ինձ ետ բերեց իմ խոհերի ծնած ժամանակավոր թմբիկից:

- Ի՞նչ ես անում այստեղ, - ինձ դիմեց տարիքով ավելի երիտասարդը, ով կարծես կարողացել էր իր ավագ կոլեգայից կորզել ինձ հարցաքննելու իրավունքը և հիմա հաճույքով օգտվում էր ձեռք բերած հնարավորությունից, - մոտոլ անձնագիր, սուր կամ ծակող գործիք կա՞:

Եթե չլիներ համազգեստը, կարող էր թվալ, թե այդ իրերը իրեն են պետք, իր սեփական կարիքների համար: Հավանաբար հասկանալով, որ նախադատությունը սխալ է կառուցել, երիտասարդը ուրիշ եղանակով որոշեց պարզել գրպաններիս պարունակությունը:

- Մենք այստեղ ծառայություն ենք իրականացնում, քաղաքացիներ կան, որոնք գալիս են, ուզում են իրենց կյանքին վերջ տալ, մենք կանխում ենք նման դեպքերը, - իրենից գոհ մերկայացրեց նա: - Դու արդեն կես ժամ է այստեղ ես, մեզ տարօրինակ թվացիր, դատվածություն ունե՞ս, բանակում ծառայե՞լ ես:

Այն, որ երիտասարդը քերականության դասերից ազատված է եղել, արդեն ոչ մի կասկած չէր հարուցում: Նույնիսկ նրա ավագ կոլեգան, ով ամբողջ ժամանակ լուռ գնում էր ինձ ու իմ հագուկապը, զարմացավ իր կրտսեր ծառայակցի հարցի կառուցվածքից, սակայն չցանկացավ միջամտել:

Իր բոլոր հարցերին բացասական պատասխան ստանալով՝ երիտասարդը, ով մինչ այդ առանձնապես չէր փայլում սառնարյուն պահելաձևով, կարծես ավելի նյարդայնացավ ու սկսեց հավանաբար ինձ կապել իր բոլոր առկա քրգործերի հետ:

Տարիքով ավագը, տեսնելով, որ ես մտադ-



# ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

րություն չունեմ ինձ կամրջից ցած նետելու, ծանր հոգոց հանեց՝ ավելի շատ ուրախանալով, սակայն, իրենց վիճակագրության, քան թե իմ առողջ հոգեկանի համար, և ինչ-որ բան շնջալով երիտասարդի սկանջին՝ թեքվեց դեպի կամրջի մյուս թևը՝ իր ծառայողական պարտականությունները կատարելու: Երիտասարդի դեմքի արյունաբքու արտահայտությունից ես եզրակացրի, որ հեռանալու որոշումն այնքան էլ իր սրտով չէր, սակայն ստիպված լինելով ենթարկվել՝ հետևեց ավագ

ծառայակցին՝ վերջում չմոռանալով իհարկե ևս մեկ անգամ իր բողբոջվ լեցուն հայացքը սևեռել երեսիս:

«Մեր ձեռնարկությունը սկսում է վնասներ կրել վերջին շրջանում հաճախացած ինքնասպանությունների պատճառով: Օրինակ, վերջերս, մեր գործակալներն արդեն ստորագրել էին բազմամիլիոնանոց պայմանագիր երիտասարդ մի գործարարի հետ, իսկ նա, պատկերացնում ես, ընդամենը երկու օր անց վերցրել ու իրեն...», - լսվեց տրոյեյրուսի հետևի մտաբաններից մեկին բազմած երիտասարդ տղամարդու բամբ ձայնը, երբ ես, որոշելով արդեն ետ դառնալ տուն, մատեցի առաջին պատահած տրանսպորտը: «Սպասիր, ռադիոյով լուրեր են հաղորդում», - ընդհատեց իր ձեռնարկության ֆինանսական շարունակ վառաբարացող դրության մասին բողբոջող գրուցակցին ընկերը: Իսկ ռադիոն նոր բան չէր ասում իր ունկնդիրներին. աճի ու առանցքնթացի մասին վկայող հերթական թվերն էին, թե ինչպես էին, օրինակ, վերջին եռամսյակում նվազել ինքնասպանության դեպքերը, 10-ից հասնելով 5-ի: «Հետաքրքիր է՝ ընկերոջս դեպքը արդեն հաշվե՞լ են, թե՞ չէ, - մտածեցի ես, - իսկ հինգի մասին արդյոք ինչ-որ մեկը հոգու՞մ է, թե՞ էականը այն է, որ կամովին իրենց կյանքին վերջ տվողների թիվը նվազել է ուղիղ կեսով»:

Յուրահատուկ թեթևություն էր պատել ինձ, երբ հասա տան շեմին. կարծես մի ծանր բեռ մեջիցս հանած լինեի: Տրամաբանական էր. քաղաքի բնակչությունը պակասել էր մեկով, հասարակությունը ազատվել էր իր համար ավելորդ քաշի հերթական կիլոգրամներից:

«Բացվել է հոգեկան առողջության վերականգնման նոր, ժամանակակից կենտրոն՝ հազեցած բարձրակարգ մասնագետներով, ապահովված բոլոր անհրաժեշտ պայմաններով: Այցելեք մեզ և մեր մասնագետները...», - գրված էր դռան տակ ընկած թղթի կտորի վրա:





# ԼԵՎՈՆ ՇԱՀՆՈՒՐ

...Առաջացա դեպի տան դարպասը, հինգ-վեց քայլ է մնում դռանը հասնելու, բայց անսովոր բան ինձ գազում ու ծովի ծանրություն է լցնում դիմացս, ինչ-որ պատկեր մթնոլորտի հետ մեկտեղվելով առաջանում՝ ուսերիս եզրերով փաթաթվում է թիկունքիս, գազում եմ շրջվելու ցանկությունս ու մանրամասնությամբ ընկալում հետևիս տեսարանը, այսինքն աչքերիս միջից չեմ նայում, ու փողոցի մի մասում գզում եմ նորահայտ հայացք-ի տեսողական շրջանակը, որն էլ պատկերել է ետնակողմի գոյությունը. նմանությամբ լինում է թիկունքումդ դրված հայելու հետ, որը առնչվում է քո մարմնին, երբ դու գզացողության հույսին ես մնացել և ընդամենը պատկերացնում ես, թե հայելին ինչպես է քեզ արտացոլում, սակայն այս դեպքում ուրիշ արտացոլանք է, սա հստակ պատկեր է ուրվագծել թիկունքիս՝ քիչ առաջվա իմ տեսածից տարբեր, ես տրվում եմ «հայացք»-ի լուծույթին. «հարևան տան պարսպի այն մասից, որտեղից քարեր են գլորվել, աղջիկ է նայում», մարմնիցս մոտ տասնհինգ քայլի վրա որոշակի մի կետում տեսողություն ունեմ, այս ամենը իմ թիկունքում, իմ աչքերում այլևս գույները ստեղծվում են անփոփոխ քարացել են, ես նայում եմ ինձնից հետ ընկած ու հանկարծակի արթնացած հայացքով, երևում է աղջկա գույնը մինչ պարանոցը, այնուհետև պատ է, նե նայում է ուղիղ կետին, որտեղ հայացքս է, մինչդեռ ես գիտեմ, որ այնտեղ մարմնապես գոյացություն չկա, միայն իր շուրջը հայտը նայվածք է:

Յնցում եմ գլուխս, իբր օրը ցերեկով անցկացնեմ մոռվածացող, բանալին մտցնում եմ ժնջիով կախված փակամի մեջ. տեսնում եմ բանալին, փականը, օրորվող ժնջիլը, բայց նաև այնտեղի «հայացք»-ով թիկունքս և ուսերիս մկանային շարժը, աղջկան, որը դեռ հենված է պատին, ներս ժպիտը անասելի պարզությամբ համեմվում է լճում ջրաճանճի թողած հետքին, որը թրթռացնելով մաշկը՝ բարձրանում ու կնճռոտում է ճակատը:

Այսուհետև դուրս էի գալիս փողոց ու նայում լուված հայացքիս, այսինքն «B» կետին: «A» կետն իմն է, գոնե կարծում եմ, որ այդպես է, քանի որ իմ աչքերն են, իմ շոշափելիքները, բայց որտե՞ղ ինձնից առավել կա՞ B, թե՞ A կետում, վերջինս այնքան էլ ինձ չի հուզում, քանի որ ես տրվել էի լուծույթում բացված տեսապատկերին՝ «B»:

Նայում եմ «հայացք»-իցս, սրա տեսողությունը շրջանաձև է նաև թեթևակի շարժական (երբ անթաթ միևնույն կետին ես հառվում, քանի որ յուրաքանչյուր աչքաթաթ ավելացնում, պակասեցնում կամ աննշան փոխում է առարկաների դիրքը):

«Առվի երկյանքով շուն է վագում, ես նայում եմ շանը», հայացք-ն իրենից ետ այլևս չի տեսնում, մշուշոտ ինչ-որ բաներ ենթարկվում են փողոցի հատվա-

# Տեսանելիք՝ B-կետից

ծին, սակայն չի վերցնում իր մեջ, միգուցե հայացք-ից այն կողմ այլևս աշխարհ չկա: Այնուամենայնիվ, «B»-կետը տեսնում է շանը, աղջկան, որը դեռ պատին նույն դիրքով հայացք-ին է նայում, սալորի ծառն ու տակով հոսող առվին, ավելի վեր նշարկվում է լեռներից մեկի ստորոտը. ես հայացք-ի պահպանած շրջանակի մեջ եմ, նա առանց աջոճախի կարող է տեսնել այս ամենը:

Մտածեցի քաղաքում կանցնի այս կաշունությունը, իրոք, մինչ քաղաք հասնելը՝ հայացք-ից քիչ ներքև արդեն կորում էր «B» կետի տեսանելիությունը, մինչևիսկ կարող էի կավիճով գծել եզրերը, որտեղից նա այլևս կուրանում է: Վերադարձա քաղաք, հայացք-ը, այսինքն «B» կոչվածը չկար, դրա փոխարեն սկսեցի նկատել բազմաթիվ կարճ, անցումային նայվածքներ՝ ճարտարապետական տարաբնույթ տեղերից. ինձ հետևում են՝ դռների արանքից, վարագույրը կիսածալ պատուհաններից, մուգ ակնոցների հետևից, մեքենաների կողային և հետային հայելիներից, սակայն սրանք նայող ու չքվող են, ակնթաթային, անհիշողություն, իսկ ես բռնացրել էի իմ հայացք-ը պասպական տան շեմին, փողոցը գյուղի գլխամասին է՝ լեռներ հանող ճանապարհին, մանկահասակ տարիքում այստեղից էի բաժանվել՝ հրաժեշտներ տվել, և հակառակը եկել ու գրկախառնվել, իմ ներսից՝ կլոր, դաջված պատկերով հայացք էր թռել ու մնացել. կողքի տները, մեր տան դարպասը, առուն, և այլն... Նա հիշողություն կրելով շրջանաձև հին պատկեր է վերցրել ու լուվել ժամանակի կտորում, որտեղ ես երեխա եմ, պատի մոտ հարևանի թուլամտությամբ հիվանդ աղջիկն է, ու ես մոտենում եմ մեր դարպասին: Ինձ թվում է, այդ պահին, ինչ-որ ընդմիջմամբ որևէ խորհրդավորություն ինձ ցնցել է, մի բան կատարվել է, որ հայացքս թողել եմ փողոցի կետին՝ որոշակի մի տեղում:

Այստեղի հայացքս չի ծերանում. իր շրջանում գտնվող պարիսպը նորոգել են, ներկել, բայց նա առջևի փոփոխությունները չի ընդունում. իր աննորոգ կեցությունում հոսող առուն է, որն այժմ ցամաք է, և վագող շունը, նաև գիտակցությունը, թե դարպասի հետևում ծնողներս են, վերջապես թուլամիտ աղջիկը, ով մանկության ընկերս էր ու ինձ զարմացնում էր, թե ինչու է մշտապես ժպտում:

Երբեմն ինքս ինձ անմտությամբ տանջում եմ, թե որքան հաճելի ընտրություններ կարող էի ունենալ՝ չծերացող հայացքս թողնելու բախտեր, երբ նե մերկացել, ոտքից-ոտք էր հենվել, ես նայել էի ներս որովայնին, որտեղ կծկվելով՝ երեսներ ընդունելով, ներս պորտը արտասվել էր:

Ջրուցակիցներ եղան, որ հաստատեցին հայացք-ի գոյությունը, նրանք նույնպես այցելում են երբևէ թողած վայրերից մեկն ու տեսնում իրենց ակնարկը՝ աչքով արված նշանը, վերջինս լուռ, անտրտուն, տարիներ ի վեր, դեռ մեխված միևնույն տեղում, պայքարում է փոփոխությունների դեմ, որպեսզի սրանք չլցվեն իր դաջած պատկերում ու տերը գալով կարողանա ճանաչել իրեն ցնցած տեսարանը, քանի որ սա դրվագ է, որևէ բանի վրա պատկերված, հյուսված, քանդակված գարդի իմաստով:

- Էս եղանակը էլի սկսեց խառնել...  
- Կխառնի, կխառնի: Բա հո մեզ շատ երես չէ՞ր տալու:

- Է խի՞ խառնի, է: Էս տարի մի քիչ բերք կա, էդ էլ կհարամի:  
- Բա պիտի խառնի, որ մենք նեղվենք, որ չարչարվենք մենք, որ մեջքներս մի քիչ ավել ծռվի, որ վաղը գնանք իշխանավորի մոտ, ասենք՝ գիտե՞ս ինչ կա, պարոն էսինչյան, մեր բերքը եղանակի պատճառով փչացավ, մեր մեջքը ծռվեց: Բեր դու մեզ մի քիչ օգնիր, որովհետև մեջքներս ծուռ է, չենք կարում ավել կռանանք:

- Հա, պահ: Նա էլ ասեց, թե՛ գիտե՞ս ինչ կա, պարոն Համասիկ, արի ես քեզ օգնեմ: Դու բեր մի տանջվի: Ես քո տեղը կվարեն էլ, կցանեն էլ, քաղիան էլ կանեն, հողդ թե քարոտ լինի՝ քարերը կմաքրեն:

- Բա պիտի մաքրի: Մեր տերը նա չի՞:  
- Ախր նա էլ իր տերն ունի:  
- Է՛, Սամսոն: Դու շատ ես բարոյացնում:  
- Ռաֆիկը լավ կիմանա: Հը՞ Ռաֆիկ պապ: Ասա է մի բան:

- Հողդ դու քո ձեռով պիտի մաքրես, քո ձեռով՝ հնձես, ամեն ինչ քո ձեռով անես: Ոչ որ քեզ օգնողը չի:  
- Եղանակն էլ, ախր, մի կողմից ա է հույա տալիս:  
- Բան չի փոխվում: Պետք լինի՝ քո հողի մեջ էլ շունչդ պիտի փչի՝ ընկնես:  
- Հա՛: Ռոլանդի պես:  
- Ռոլանդի պես... Ռոլանդն ինչից մեռա՞վ:

- Սրտի կաթված էր:  
- Այ մարդ, քո գլխումը հիշողություն չի մնացել: Ի՞նչ կաթված, ի՞նչ բան: Ռոլանդը վառվեց:  
- Հա, էլի... Վառվեց Ռոլանդը:  
Ռոլանդը մեր գյուղացին էր: Ռոլանդի մասին ինչ հիշում եմ, աղոտ եմ հիշում: Բայց մի բան կա, որ հենց Ռոլանդ անունը լսում եմ, միշտ մտքիս է գալիս: Ռոլանդը մի Երազ ուներ. Երազ մեքենա: Կարծեմ՝ դրանով էլ տուն էր պահում: Էդ Երազով ինչեր ասես չեն տարել ու բերել: Ռոլանդն ու Երազը անբաժան էին իրարից:

- Եթե ասում ես Ռոլանդ, ուրեմն երազը հետև ա,- մի օր ասել էր Համասիկ պապը ու չէր սխալվել:  
Ռոլանդը տարիքով մոտ յոթանասուն էր: Բայց էնքան ծիգ մարդ էր, որ ջահելի պես վեր ու վար կաներ առվի ուտով ու դեռ մի բան էլ՝ ոռոգման ջրի համար կռիվ կաներ: Թիկնեղ էր Ռոլանդը, բամբ ձայն ուներ: Բայց, կարծեմ, չկամ էր: Փոքր ժամանակ Ռոլանդի այգուց շատ էինք ցոգոլ թոցնում: Նա էլ ընկնում էր հետևներիցս, թե՛ կանգնեք, ա՛յ լակոտներ, էդ ո՞ր եք փախչում: Դե էլ ինչ կանգնեք, փախի, որ փախչես: Մենք էլ քեն պահող էինք. իրիկվա հետ, պատահում էր, մտնում էինք Ռոլանդի այգին ու բարդ-ջանները թոցնում: Հաջորդ օրը մռթմոթացող ծերուկին փողոցում տեսնում, քթներիս տակ խնդում էինք:

Ռոլանդը որ մեռավ, ամբողջ գյուղը իրար եկավ: Հատկապես մենք՝ երեխաներս, շատ էինք հետաքրքրված Ռոլանդի մեռնելու առեղծվածով: Ասում են՝ Ռոլանդը իր Երազով գնում է հողամաս, որը գյուղի մյուս ծայրին էր, այգուց գործ է անում, հոգնում է: Իսկ թե հետո ինչ է լինում, որ այգին սկսում է այրվել ու Ռոլանդն էլ այգու հետ ածխանում է՝ ավելի լավ կիմանան գյուղի բիժերը, որ գյուղամեջում հավաքված քննարկում են.

- Ախր, ա՛յ Ռոլանդ, դու էլ քանց Համասիկը բեթար, խեղճ չունես: Ախր խոտի դեզի կողքին նստում, ծխում են, մի բան էլ վերջում սիգարետը գետնին հանգցնում: Ախր վտանգավոր է: Դեզը կվառվի, քեզ էլ հետը կվառի:  
- Այ Ռաֆիկ ջան, եղպես չի եղել: Ռոլանդը չորացած տերևները հավաքում՝ կուտակում է իրար վրա: Դե էդ դազալը պիտի վառի չէ՞: Էդ ո՞ր մեկս չենք վառում: Վառելուց հետո կրակը սկսում է տարածվել: Ռոլանդն էլ, փոցխը ձեռին, սկսում է կրակը հանգցնել: Փոցխով խփում է կրակին, կրակը թռնում է ոտքին, ու ոտքը սկսում է վառվել:  
- Բայց ինձ թվում է՝ էնքան էդ կրակից չի մեռել, ինչքան վառվելու վախից: Երևի սրտի կաթված...



# ՇՈՎՀԱՆՆԵՍ ՇՈՎԱԿԻՄՅԱՆ

- Այ մա՛րդ: Դու էլի քոնն ես քշո՞ւմ: Սրտի կաթված, հա սրտի կաթված: Ի՞նչ գիտեք, թե Ռոլանդը ինքը իր անուշաղբույրյան պատճառով է մեռել: Մենք լավ գիտենք, որ մեր գյուղում չկան մարդիկ կանցողից շատ են:

- Էդ խոսակցությունն ո՞ր ես տանում:  
- Չէ, Ռաֆիկ, խի՞ ես խանգարում, թող ասի: Ասա՛, Սամսոն:

# Ռոլանդի Երազը

- Դե ինձ թվում է, բացառված չի, որ Ռոլանդս հոգնել է գործ անելուց: Պառնել է՝ քնի: Մեկն էլ հետևից կրակին է տվել:  
- Է, Սամսոն: Սարքեցիք չգիտեմ ինչ: Դե մարդ է, շփոթվել՝ ծխել է: Այրվել, պրծել, գնացել է:  
Էսպես էլ անհասկանալի մնաց, թե ինչից մեռավ Ռոլանդը: Ճշմարտությունը երևի միայն Երազը գիտի: Երազն էլ չի կարող պատմել: Բայց Ռոլանդի մահը որքան էլ հետաքրքրեց բոլորին, միևնույնն է, դժվար թե տխրեցրեց: Օրինակ՝ Ռոլանդի բոռը բանակում էր ու պապի մեռնելու առիթով արձակուրդ եկավ: Ինքս եմ տեսել ինչքան անհոգ էր պապի թաղմանը:

Հարևանները տխրած չէին լինի, որովհետև Ռոլանդը լավ հարևան չէր: Քիչ է՝ երեխեքին նեղացնում էր, դեռ մի բան էլ՝ միշտ ոռոգման ջրի կռիվ էր անում: Բարեկամներ էղքան չունեք: Երևի անկեղծ սրտով տխրել էին նրա կիցն ու աղջիկը: Էդ երկուսն էին դարդ անում:

Հիմա, երբ Երազ եմ տեսնում, Ռոլանդին եմ հիշում: Երևի մոռացա ասել, որ կնոջից ու աղջկանից առավել տխրել էր նրա Երազը, որ կյանքի ընկեր էր Ռոլանդի համար, նրա հենարանն էր, նրա հույսն ու թիկունքը: Հիմա Երազը մնացել է առանց Ռոլանդի: Անցնում եմ Ռոլանդի տան կողքով, ու ո՛չ այգուց ցոգոլ կա, որ երեխեքը թոցնեն, ո՛չ բարդջան, որ վատություն անեն, ո՛չ էլ Ռոլանդը կա, որ հետը խոսես, ու իր բամբ ձայնով բողբոջի ինչ-որ բանից: Տան դիմաց կանգնած է Ռոլանդի կապույտ Երազը, որ անձրևի ու արևի միահամուռ ջանքերով արդեն ժանգոտել, տեպից ընկել է: Երազը մնաց առանց Ռոլանդի, բայց նրանք միշտ իրար հետ կապված կլինեն: Դրա ապացույցն այն է, որ գյուղում Երազ տեսնելիս Ռոլանդին են հիշում, իսկ Ռոլանդ անունը լսելիս՝ կապույտ Երազն է պատկերանում:



# ԱՐԹՈՒՐ ՄԻԿՈՅԱՆ

Ժամանակի թափանցիկ միջավայրում անհետ չքանում էին մարդկանց բերանները լուսաբացները: Երկրի մաշվ տարածության մեջ արևի ճառագայթները կարողանում էին իրենց փոքր բնակատեղիները՝ մարդկանց բերանների փոքրիկ թագավորությունը: Երբեմնի հաղթական «ուռան» չքացել էր անհեթեթ, տխուր բույրերի մեջ:

5076 թվականին մարդկությունը գտավ Տիեզերքի եզերքը:

5078 թվականին մարդկությունը, հաշվի առնելով երկրագնդի վրա անտանելի պայմանները, որոշում կայացրեց ոչ միայն հեռանալ երկրագնդից, այլև Տիեզերքից: Սակայն Տիեզերքը լքելու որոշմանը դեմ էին մարդկության 40 տոկոսը:

Երկրի մթնոլորտում ամխաթթու գազի բարձր տոկոսները դանդաղ իջեցրել էին Համաշխարհային օվկիանոսի pH հավասարակշռությունը և ջրերը դարձել է թթվային: Օքսիդացումը հասել էր կրիտիկական կետի, որն իր հետ բերել էր գանգավածային մահացություններ: Այժմյան օքսիդացումը 10 անգամ ավելի արագ էր ընթանում, քան 252 միլիոն տարի առաջ, երբ պերմի գանգավածային ոչնչացման հետևանքով երկիր մոլորակի կյանքի մեծը մասը ոչնչացավ: Բացի այդ, մեր երկրից 8000 լուսային տարվա հեռավորությամբ գտնվող Վոյաճ Ռայե WR 104 աստղը 5072 թվականին պայթել էր և տարածել էր գամմա ճառագայթներ՝ ուղղված դեպի Երկիր: Դրա հետևանքով ավելացել էր ուլտրամանուշակագույն ճառագայթումը: Ակնբարձրային աղետ չէր տեղի ունեցել Երկրի վրա, բայց դա առաջ էր բերել մթնոլորտի մեջ քիմիական ռեակցիաների առաջացում, որոնց արդյունքում առաջացել էին ազոտի օքսիդներ և ամխաթթու գազ: Ազոտի այդ օքսիդը սկսել էր քայքայել օզոնային շերտը և առաջացել էր ֆոտոքիմիական սմոգ և ազոտային թթվի անձրևներ: Բացի այդ տեխնոլոգիաները զարգանալու հետ միասին դրանք դուրս էին եկել վերահսկողությունից և առաջացել էր գորշ լորձ: Գորշ լորձը ինքնավերարտադրվող մոլեկուլային նանոտեխնոլոգիա էր, որը չէր ենթարկվում մարդուն:

Վեցերորդ հազարամյակի մարդկանց աչքերը կարմիր էին ու մեծ: Մեծ աչքերը համարվում էին գեղեցկության չափանիշ: Մթնոլորտի միջին ջերմաստիճանը ամբողջ տարիի տատանվում էր 55-73 աստիճան սնդիկի սյունի սահմաններում: Գլոբալ տաքացման հետևանքով մարդկանց աչքերը մգացել էին: Գործարաններում մարդկանց փոխարինել էին ռոբոտները: Մարդկանց տեսողությունը վատացել էր և շատերը կրում էին բիոնիկ ոսպնյակներ: Մարդկանց մեծ մասն ուներ մարմնի բիոնիկ ժամացույցներ, որոնք տեղադրված էին այն օրգանների վրա, որոնք տվյալ մարդուն հաճախակի էին դավաճանում:

Բժշկության մեջ լայնորեն կիրառվում էին Նանոբոտները: Նանոբոտները միկրոսկոպիկ ինքնագնաց ռոբոտներ էին՝ նախատեսված էին վանդոթյունների՝ հատկապես քաղցկեղի դեմ պայքարելու համար: Բժշկությանը հաջողվել էր փոփոխություն կատարել մարդու սաղմի գենոմ: Նախօրոք երեխայի արտաքինը և ունակությունները հնարավոր էր դարձել կարգավորել: Ծնողներն իրենք էին որոշում, թե որ սպերմատոզոիդը որ ձվաբջջի հետ պետք է հանդիպի: Իհարկե, ընտրությունը պայմանավորված էր կատարյալ երեխա ունենալու ցանկությամբ: Այս բացահայտումը կարարվել էր 4066 թվականին: Եվ արդեն հասարակության մեջ տեղի էր ունեցել խոր ճեղքում՝ բարձրագույն դասի (գերակառուցական) դասի և ցածր դասի (ճնշված բնակչության) միջև: Այդ բժշկության նորագույն տեխնոլոգիաներից բացառապես օգտվում էր միայն գերակառուցականները: Մարդիկ դարձել էին ավելի բարձրաստակ: Բարձրաստակ մարդիկ ավելի հեշտ էին տանում արտաքին ջերմության ավելցուկը գետնատարած, թաղանթապատված աշխարհում: Արդեն 70 տարեկան ավելի էր, ինչ համայն մարդկության համար ստեղծվել և գործում էր մեկ ընդհանրական լեզուն ու գիրը: Այդ գիրը ստեղծելիս ուսումնասիրման և գիտական գործընթացում ընդգրկվել էին աշխարհի բոլոր լեզվաբանները: Արդյունքում ստեղծվել էր մեկ լեզու ու գիր, որն ընդգրկում էր աշխարհի բոլոր լեզուները և բոլոր գրատեսակները: Քաղաքներում բացառապես միայն գործում էին առանց վարորդի մեքենաներ: Բարձրագույն դասի մարդիկ իդեալական էին թե՛ իրենց մարմնաձևերով, թե՛ մտային և ստեղծագործական ունակություններով: Իսկ ցածր դասի մարդկանց մաշկը պիգմենտացված էր, որի շնորհիվ փոքրացել էր վնասակար ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցությունը մարդու մաշկի վրա: Ցածր դասի մարդիկ ունեին հաստ հոնքեր և ավելի ընդգծված ծնոտ, որը կոմպենսացնում էր երկրի թույլ գրավիտացիան: Արեգակնային համակարգի մեծացման հետ մեծացել էին նաև ցածր դասի մարդկանց աչքերը: Այժմ մարդիկ ապրում էին ավելի անվտանգ, գետնափոր միջավայրերում՝ հեռու արեգակից: Մարդիկ դուրս էին եկել համակարգչային կոլապսից, քանզի ինտերնետային տիրույթը գրեթե լիովին սկսել էին վերահսկել գորշ լորձերը: Նման տարատեսակ, հակասություններով, բախումներով լի Երկիրը դարձել էր մարդկության համար մի անտանելի թունավոր տեղանք, որտեղ ամեն ինչ կարող էր սկսվել և ավարտվել ակնթարթորեն: Հենց ցածր դասը կազմում էր Երկրի բնակչության 40 տոկոսը և նրանք հնարավորություն չուներին հեռանալ վտանգներով լի մեր Երկրից ու Տիեզերքից: Տիեզերքը նույնպես դարձել էր խիստ վտանգավոր, քանզի Արեգակը Ա սև խոռոչը երբևէ, քան հիմա, սպառնում էր կոլ տալ ողջ Տիեզերքը: Բարձր դասի յուրաքանչյուր ընտանիք, ստեղծելով իր տեխնիկական գերզարգացած, մտքի ուժով ղեկավարվող թռչող սարքերը՝ միաժամանակ գուգահեռ Տիեզերքում արդեն գտել էր բնակության համար պիտանի մոլորակ և պատրաստվում էր հեռանալ՝ ցածր դասին թողնելով անհուսության վտանգի ճիւղաններում: Ծնված բնակչության սրտերը երբեմն քաղցրացնում էին լուսաօդային ճառագայթներով շաքարի պարզագույն մոլեկուլները, որոնք լողում էին աստղերի շուրջ կուտակված գազերում: Ծնված հասարակությունն անբաժանելիորեն կապված էր այն ամենի հետ, ինչը մարդկային էր: Վերջիններս բնական էին և ստեղծված էին ինչ-որ թռչունների գուգակցումից և նրանց մարմինը չէր բուրում, ինչպես անձրևի թացությունից առաջացած սոճու ծառը: Նախաստեղծ մարդու մաշկի հոտ էր գալիս նրանց վրայից: Նրանք

բարձր դասի նման ներկայացված էին իրենց էությունը: Ցածրերի մարմնի ռիթմիկ տրոփումն արտաբերվում էր ցրում կենդանի ինաստության մասին: Նրանք իրենց հոգիները չէին ինտեգրվել սահմանված արհեստական թաղանթի մեջ և բարձրերի նման քայլելու ընթացքում գոռոզությամբ լցված՝ չէին խայթում իրենց իսկ անցած մարմնի հետագիծը: Բարձր դասը դարձել էր մի յուրօրինակ քիմիական նյութ, որին ձեռք տալու դեպքում ցածրերը հնարավորություն չէին ունենա մտնել փոխշփման մեջ, այլ միայն շարունակական ներգոգները փոխազդեցության մեջ կմտնեին: Բարձր դասի իդեալական աչքերը՝ համարված բարձրագույն համակարգչային, ինտերնետային մոդուլով, ընդունակ էին տեսնելու իրենց մեռնող խիղճը: Կենդանիներից բարձր դասի կողմից փրկվել էին միայն նրանք, որոնք կարող էին օգուտ տալ: շներ, կատուներ մանր ու խոշոր եղջերավոր կենդանիներ, ձկներ, դեֆիններ, թռչուններ, արժիվներ, կաշաղակներ, հավեր, բադեր, սագեր...

Հաշվարկված տարածությունում, գլուխը կախ, այգում աշխատում էր Աբան: Նա ցածր դասից էր: Աշխատելու ընթացքում Աբան աչքաչափով բանջարեղենը թթու էր դնում ստորգետնյա թագավորության Սինդոզի, խոնավ օդում: Նրա կինը՝ Ագապին, խաղում էր իր երկու մանկահասակ որդիների՝ Հարմայն ու Արայի հետ: Ագապին այնպես էր ուրախ-զվարթ խաղում, սիրում

առածգական գնդերի պես ծովել, ձգվել, տափակել էին կատարելագույն ժամացույցներով որոշված ժամանակից: Բարձր դասի բոլոր ընտանիքներն իրենց մտքի ուժով ղեկավարվող թռչող սարքերի մեջ նստած, իրենց հետ ամեն տեսակի պաշար վերցրած՝ պատրաստվում էին թռիչքի: Գորշ լորձերն արագ գալիս էին նրանց ուղղությամբ՝ ցանկանալով հեռանալ նրանց հետ միասին: Բարձր դասի մարդկացից մեկը մեկնարկային գոռաց և նրանք իրենց սարքերով հապճեպորեն հեռացան Երկրից ու Տիեզերքից՝ ցածր դասին թողնելով մեռնող երկրագնդում և գորշ լորձերի քմահաճությամբ: Գորշ լորձերը, գտնվելով Երկրի մակերեսին՝ ձգտում էին գտնել դեպի ցածր դասը տանող ստորգետնյա թագավորությունը: Սակայն մի անտես ուժ նրանց անընդհատ շեղում էր, երբ նրանք արդեն գտնելու նպատակակետին շատ մոտ էին լինում: Գնալով թթվածնի շերտը նոսրանում էր և մարդիկ ամեն անգամ թախիծով և մտովի միլիմիկրոններով չափում էին հեռավոր բնակելի գալատիկաների տարածությունները: Քնելուց առաջ մարդկանց մարմինների քիջները հրաժարվելու էին քնից և ծերացած ատոմներին թամբած՝ գնում էին այդ բնակելի մոլորակներում վայելելու տարածության ազատ սպեկտրի տեղաշարժը, որտեղ պատկերացում էլ չկար, որ ջրածինը կարող է վերածվել հելիումի: Արհեստական լույսն իսկական տառապանք էր դարձել մարդկանց համար:

# ԱՇԽԱՐՀԻ

երեխաներին, կարծես թե աշխարհի ու Տիեզերքի կործանումը հետաձգվել էր անորոշ ժամանակով: Հանկարծ Աբայի ձեռքերում աշխատանքային գործիքները պրկվեցին, ինչպես վառարանն է լցվում կարճատև կրակի շեղջով: Նա գործիքները նյարդային շարժանք լուխների մարգի մեջ և սկսեց զայրացած լուխել:

«Թո՛ղ հույսեր չկապեն մեր մեռնելու հետ էդ բոզի տղա բարձրագույն դասի ապուշները: Ինչ գնով էլ լինի՝ փրկելու եմ ընտանիքս», - հուսահատ լացելով՝ ասաց Աբան և գլորվելով ընկավ հողին: Այդ ժամանակ Աբայի հարևանների ենթակա հայացքները բախվեցին Ագապի կծկված մարմնին: Ագապին դադարեցնելով երեխաների խաղը՝ ոտքերն իրար կիպ քսելով (կարծես ցանկանալով ճանապարհը նեղացնել, կենտրոնացնել իր ոտքերի շուրջ) մոտեցավ ամուսնուն: Նա կիսածնկեց, գրկեց Աբայի գլուխն ու սկսեց ականջի տակ մեղմ շնչնշալ. «Եթե մենք լքենք այս Երկիրն ու Տիեզերքը, դրանով իսկ կլքենք Աստծուն ու Քրիստոսին և մնացած սուրբ հոգիներին: Իմացիր, եթե մեզ նույնիսկ հաջողվի փրկվել ու տեղափոխվել ուրիշ Տիեզերք, մենք կզրկվենք ոչ միայն Աստծուց, այլև այստեղ կթողնենք մեր հոգիները: Անհոգի մարմնով ապրելով՝ մենք կվերածվենք անխիղճ գիշատիչների: Եվ այլևս չենք նկատի միմյանց: Հավատա, մենք կնվաճենք մեր երկրագնդի ամեն մի թանկ մետրն ու նորից վճիտ օղը կտողարկվող շրջոցով կզբոսնի մեր այգիներում: Իմացիր, Նա երբեք մեզ չի մոռանա և չի լքի մեզ: Նրանք՝ Աստված ու Քրիստոսը, այստեղ են, մեզ հետ, մեր շուրջը: Պիտի միայն զգաս ու սովորես խոսել նրանց հետ», - շնչում էր ականջին Ագապին և իր աչքերում մարմնող շառագույնը պայծառանում էր հնարավորություն տալով ըմբռնելու, նմանակելու ամուսնուն և փոքր-ինչ հեռվում խաղացող երեխաներին իր աչքերի ողջ հնչերանգային ռիթմը: Ամուսինները ոտքի կանգնեցին, մի պահ խոճոռեցին հոնքերը, կարծես փորձելով չափել ժամանակի արագությունը, և քայլեցին դեպի մեկնարկային տունը:

Բարձր դասն անհանգստացած էր: Նրանց վախեցնում էին գորշ լորձերի անկանխատեսելի գործողությունները: Հնազույն

Առավոտներն այլևս արևի լույսը չէր ազդարարում լուսաբացի մասին: Արևի լույսը հիմա դարձել էր խիստ վտանգավոր: Աբան լեղապատառ գոռաց հանկարծ: Իր որդին՝ Աբան, չկար ոչ բնակարանում և ոչ էլ տան բակում: Ագապին իր մյուս որդուն՝ Հարմային, թողնելով դիմացի հարևանի տանը, Աբայի հետ գնաց փնտրելու իրենց երեխային: Աբան անընդհատ անհանգիստ մտնում էր. «Շատ փոքր է նրա ողջ մնալու հույսը: Նրան հաստատ կամ գորշ լորձերն են առևանգել կամ էլ նա է գտել ստորգետնյա թագավորությունից դուրս գալու ելքը»:

Ագապին նրան հանգստացնում էր՝ հավատացնելով, որ իրենց որդին ողջ է և ապահովության մեջ: Որքան նրանք առաջ էին գնում, այնքան տխրությունը ավելի էր խորանում ապրելու բնագրի մեջ: Աբայի տրամաբանությունը տեղի էր տալիս հուսահատությանը, և նա սարսուռ էր իր որդու անհետ մեռնելու մտքից: Անզուրպ զաժամություն կար այդ պահի մեջ, որ նույնիսկ թևաքափ էր անում հավատով լեցուն Ագապին:

«Հերիք է, մենք արդեն հինգ ժամից ավելի է՝ փնտրում ենք նրան: Անիմաստ է: Միևնույն է՝ մենք նրան չենք գտնի», - հուսահատ ասաց Ագապին՝ նստելով թաց խոտին:

Աբան փորձեց նրան համոզել, որպեսզի շարունակե փնտրությունը, բայց կինը մնաց անդրդվելի և տեղից չշարժվեց: Աբան հուսահատ նստեց նրա կողքին և գլուխն առավ ձեռքերի մեջ: Որքան երկար էին նրանք նստում, այնքան տխրությունն ավելի էր արմատավորվում նրանց ներսում: Որպես տխրության խորհրդանիշ՝ մեկընդմեջ լսվում էր ցածրահաս քամու կաղկանձը, որը որսալով թաց խոտի ջրաշիթերը՝ ներթափանցում էր ամուսինների աչքերի մեջ և այնտեղից դուրս գալիս որպես աղի արցունք: Երկու ֆիզիոլոգները, խավարում նստած, մտովի շարժվում էին իրենց սրտի խոլ գարկերին համընթաց: Աբան ու Ագապին մտ մեկ ժամ նստելուց հետո, վեր կացան տեղից և շարունակեցին փնտրությունը: Նրանք Աբային փնտրում էին ամենուր: Նույնիսկ այնտեղ էին փնտրում, որտեղ խելամիտ չէր, որ նա գտնվի: Երկար, տանջալից փնտրություն ավարտվեց նրանով, որ նրանք մի կերպ ուժասպառ հասան տուն,

իրենց մյուս որդուն վերցրին հարևանի տնից և պառկեցին անկողնում՝ քնեցին: Այդ նյարդային հապառապ բուժումը, որ իրենց պատեց, ավելի շուտ ոչ թե հոգևածության արդյունք էր, այլ կրակահրեղյալ կարծածատն փախուստի միջոց: Այդ գիշեր նրանք տեսան միևնույն երազը: Երազում նրանք տեսան Արային, ումից ծակող, սուր քնքշություն էր ճառագում: Արան կանգնած էր մանկահասակ երեխաների մի մեծ խմբի մեջ: Նա տարածում էր թևերը և երեխաներն ուրախ խժխժոցով գալիս, գրկախառնվում էին իրեն: Միաժամանակ, Արան աչքի պոչի խորհրդավոր ժայտով նայում էր ծնողներին: Նրանք երազում վազեցին Արայի կողմը, բայց նույն պահին խոնավ, ցուրտ օդը դիպավ նրանց գլխին՝ աղալով նրանց մազերը: Աղացած մազերը չբափվեցին գետնին: Ամուսինների աղացած մազերի մեջ տեսան մի ընդարձակ երկար ճանապարհ, որը տանում էր դեպի լաբիրինթոս: Նրանք, իրենց տեսադաշտից կորցնելով Արային ու երեխաներին՝ մտածեցին, որ նրանք հավանաբար այնտեղ են: Նրանք վազեցին ընդարձակ, երկար ճանապարհով և մտան լաբիրինթոս և դեռ այնտեղ մի քանի քայլ էլ չէին արել, երբ կատաղի արագությամբ նրանց մազերը վերդարձան իրենց և ամեն ինչ չբացավ նախորդ դարաշրջանների բուրավնավետ լանջերի նման: Այդ ժամանակ երազը ճաք տվեց և երևաց իրականության հախճապատ ստվերը: Թախծն այրեց նրանց սիրտը և նրանք արթնացան իրենց քրտինքի մեջ մոլորված: Այդ օրն այնպես ստացվեց, որ ամբողջ ստորգետնյա թագավորության՝ Սինդոզոյի բնակչությունը, տեսել էր այդ նույն երազը: Եվ այդ երազը նրանց սրտերում սեր ու կարոտ էր արթնացրել Արայի նկատմամբ: Եվ եթե սկզբում նրանք այն-

ծակ մութ տափաստանից: Նրանք գալիս-ցած ուզում էին հարձակվել Արայի և Ագապիի վրա, բայց փոքրիկ Հարման նրանց կազնեցրեց՝ ասելով. «Այդ ես եմ նրանց այստեղ բերել: Ինձ անընդհատ երևում էին աքսորակտ անհասկանալի նկարներ, որոնք իրենց գունային, ալիքային տատանումներով՝ անընդհատ քաշում էին իրենց կողմը: Մեզ այդ նկարների գունային ալիքները բերեցին այստեղ: Եվ երբ հասանք այստեղ, գունային ալիքները նկարների հետ միասին չբացվեց իմ տեսադաշտից: Հիմա խնդրում եմ՝ կազնեց, սպասենք, թե ինչ է հետո լինելու»:

Բոլորը մի պահ լռեցին՝ աստղերի լույսերի տակ լողացող ձորակների նման, ապա փակեցին իրենց աչքերը և սկսեցին սպասել: Նրանց ուղեկցող բոլոր կենդանիները, թռչունները, իրենց համար ջրածնապարի բացած ջրային կենդանիները, բոլորը նույնպես փակեցին աչքերը: Եվ նրանց թվաց, որ իրենց ուղեկցող բնության բույրերը նույնպես փակեցին աչքերը: Նրանք բույրն աչքերը փակ ինչ-որ անհասկանալի լեզվով աղոթք էին մղում: Այդ բառերը, լեզուն ու ձայնը ծանոթ չէին իրենց և սուկ միայն իրենց ներսի պատուհանի միջոցով էին դուրս գալիս: Գիշերային եղյամբ փայլեց նրանց աչքերին և քամին դուրս սողուկեց մշուշից մեջից ու սկսեց հարվածել նրանց գլխին: Քամին անխան խառնում էր նրանց մազերը: Քամին քամել էր ամբողջ օդը և քամու տեսքով կենտրոնացել նրանց գլխավերևներում: Ինչպես դահուկների ճռռոցով մարդն է հաղթահարում սահադաշտը, այնպես էլ նրանց մազերը ճռռչոցով պոկվեցին գլխներից և փշրվելով՝ սկսեցին լողալ օդում: Նրանք այդ ժամանակ բացեցին աչքերը՝ սկսելով զարմացական բացականչություններ հնչեցնել: Բայց նրանց այդ բացականչությունները ձխի բարակ շերտի տեսքով կախվում էին օդում և ապակու զնգոցով թափվում գետնին: Ինքնառի մեջ հայտնված մարդ-

ցած աշխարհն էր, որտեղ ժամանակը և ճակատագիրը նահանջում էին անսահման կարոտի և սիրո առջև: Լաբիրինթոսի կապտակարմրագույնի մեջ սինդոզոցիների երկրային կյանքը փշրվում էր և լաբիրինթոսի միջտարածքներում կապույտ-կարմիրը հնամաշ վերմակի նման տնքում էր: Ագապին և Արան իրենց որդու հետ անորոշության մեջ առաջ էին շարժվում: Հանկարծ նրանց առջև բացվեցին դարչնագույն կլոր գանգվածներ, որոնք աղմկում էին՝ ամպրոպից առաջ բողբոջների պայթյունի նման: Դարչնագույն կլոր գանգվածների քանակը տեսանելի չէր: Չանգվածները կարծես ձուլված լինեին միմյանց: Երբ Ագապին, ամուսնու և որդու հետ փորձեց ինչ-որ ձևով շրջանցել նրանց, դարչնագույն գանգվածներն անմիջապես մխրճվեցին նրանց մեջ: Ընտանիքի անդամները կարծես կուրացան: Կարծես դարչնագույն գանգվածները նրանց հայացքները շրջեցին դեպի իրենց ներսը: Նրանք ոչինչ չէին տեսնում իրենց դիմաց, միայն իրենց ներսն էին նայում՝ որպես ներաշխարհի աստվածներ: Երբ նրանք փորձեցին իրենց ներաշխարհի պատկերներն ավելի հստակ տեսնել, հանկարծ նրանց ներաշխարհները սկիայիդարի սուր նոտայի հնչյունով միավորվեցին: Նրանց հայացքները նույնպես միավորվեցին, և սկսեցին դիտել՝ որպես գեղարվեստական Ֆիլմ, իրենց ներսի հետևյալ պատմությունը:

Քարերի արանքում կախված սարդը տուն էր գործում ջրի վրա, իսկ ջուրը, կաշկանդված իր ազատության սահմանափակումից՝ անընդհատ վրեժ էր լուծում սարդից՝ մշտապես քանդելով նրա՝ քարերից կառույց, ճարճատուն սարդոտայնը: Ագապին, Արան և Հարման մեկ ես դարձած նստած էին այդ երկու քարի դիմաց՝ սարդի տան մոտ և պիտի վճիռ կայացնեին, թե ով է ճիշտ այս վեճում: Նրանց լեզուներն անտառային փարթամ օդի շերտից սահեցնում էին ջրի վրայով ու գետի ջուրը մերսման վայելքից տնքում էր: Սարդը կատաղած փորձում էր անտառային հաստ օդի շերտից պաշտպանել իր տան վերջին ծվեները: Միասնական եսը օդի հաստ շերտը վերադարձնում էր անտառին և ներողություն խնդրում սարդից: Ձրի մեջ շրմփաց ձուկը գիհեճու հոտից և մամուռը ցողի կաթիլները թափ տալով՝ արթնացավ մանուշակագույն կիսախավարից ձուլված օդում: Միասնական մոլորված մտքերը արթնացնում էին բնության բոլոր մասնիկներին և նրանք անմարդկային խղճահարությամբ լցված նրանց նկատմամբ՝ նույնպես փորձում էին ելք գտնել իրավիճակից՝ փորձելով ամեն կերպ փոխզիջումային տարբերակ գտնել սարդի և ջրի վեճում: Միասնական էսի մտքերը, բնության հետ մի ամբողջություն դարձած, մտածում էին՝ հիպոստոլ ուժով ազդելով վիճող կողմերի վրա: Այդ միասնական լռության մեջ՝ անշշուկ սահում էր պարզորոշ մի կարգապահություն. այս պահն այնքան կծգվի, քանի դեռ գիշերային տեսիլիքից վախեցած ծառերի արանքների լուսաբիծը համարակալություն ձեռք չի բերել՝ հանգիստ մտնել ճախրող բազմների թևերին: Ժամանակը մեխվել էր երկու քարի արանքում և միասնական եսը չէր կարողանում հասկանալ, թե ինչու է այդ փոքր վեճին այդքան մեծ նշանակություն տրվում: Երբ քամին սկսեց շարժել բնության բոլոր մասնիկներին և խոտերը, ծառերը, ծաղիկները, բոլոր-բոլորը սկսեցին սահել դեպի միասնական եսը և անցան նրա թևի տակ: Բնության մասնիկներն ամար, արագ շարժից միասնական էսի թևատակերն սկսեցին քոր գալ և նա սկսեց քորից հաճելի գրգռված՝ հռռռալ: Այդ անկուշտ ծիծաղից զարմացած բնությունը՝ ոգևորված ձայնակցեց նրանց հետզհետե ծավալվող ուրախ ծիծաղին: Ծիծաղի առատությունից եսը և թևատակերի բնությունը սկսեց ուռչել և փոքր բազմատեսանի գույնգույն օդատեք սողուն դարձած՝ սողալով գնաց և լռվեց սարդոտայնի և ջրի արանքում: Օդատեք սողունը սեթևեթանքով շարժվում էր՝ իր մեջ հավաքելով միասնական էսի հոգու և բնության ոգիների փոքր մասնիկներ: Այդ պահին միասնական էսին թվում էր, թե ամեն ինչ փրկված է, և իրենց գոյունի ս-

դացող ենթագիտակցությունն արդեն փնտրում է իրենց խորհրդավոր, մշուշոտ արահետներում: Հաջորդիվ մի անբացատրելի, հոգի կլանող ձայնաշենտ կլանեց նրանց: Եվ միասնական էսն սկսեց առանձնանալ դարչնագույն կլոր գանգվածներից՝ խավար պատկերներին հանդիման: Ագապին, Արան և Հարմանն իրենց տեսադաշտից կորցնելով այդ գանգվածներին՝ չուված աչքերով, բաց բերանով՝ հրաժեշտ էին տալիս նրանց: Նրանք, փոքր-ինչ ուշքի գալով՝ շարունակեցին ճանապարհը ծանր լռությունից առաջացած հուշիկ թակոցի ներքո: Եվ կարծես վայրկյանները, լուպեները, ժամերն իջնում էին այդ հուշիկ թակոցի ներքո: Որոշ ժամանակ հետո հուշիկ թակոցը վերածվեց խժոցի՝ կարծես հոգնելով միևնույն ձայնարկման պարանոյալից:

«Կոնֆետի թղթերը»,- ուրախ բացականչեց Ագապին և սկսեց վազել: Արան և Հարմանը վազեցին նրա հետևեցին՝ գոռալով միևնույն բառերը. «Արային հիմա կգտնե՞նք, կգտնե՞նք»: Նրանք վազում էին, գոռում, ծղորտում հեքիաթի էջերում խաղացող գիժ երեխաների պես: Բայց ոչինչ չէին տեսնում: Լսվում էին միևնույն կոնֆետի թղթերի խշխշոցները: Նրանց դյուրահավատությունը դարձել էր եռացող շիլա, որտեղ տապից տանջված բնագրն ու սերը միմյանց հետ հապճեպ դաշինք էին կնքում: Նրանց ոտքերի ճանրոթյան տակ հողից ծլած խոտերը, հպանցիկ կառչելով նրանց ոտքերից՝ ավելի էին արագացնում նրանց վազքը: Արագ վազքի մեջ նրանց ծանր մտքերը թեթևացան անկշռության աստիճան: Չառանցական վազքը դոփեց տեղում և պայթեց օդում և մշուշի, փոշու մեջից երևացին սինդոզոցիների կքանստած, մտահոգ հայացքները: Արայի ընտանիքը հայտնվեց մի տեղանքում, որտեղ Արան լուսամտիցով ծածկված սեղանի առջև նստած՝ օդի գույների մեջ մատերն էր շարժում: Սինդոզոցիները ուշադիր նայում էին օդի մեջ խաղացող նրա մատներին, որտեղ Արան գրում էր. «Կգա ժամանակ, երբ դուք պատրաստ կլինեք ընկալելու և ընդունելու իմ ձայնը: Ես Հիսուս Քրիստոսն եմ: Դուք Արային սիրելով՝ սիրեցիք նաև Քրիստոսին: Դուք՝ Ագապի, Արա, Հարման, հաշտություն հաստատելով սարդի և ջրի միջև՝ լուծեցիք ոչ միայն նրանց միջև եղած վեճը, այլև լռեցրեցիք ձեր ներսի աղմուկը: Քանի դեռ սարդն ու ջուրը ապրում են հաշտության մեջ, դուք կնճաք ինձ հետ, մինչև երկրագնդի հաջորդ վերամարմնավորումը: Դուք հիմա ձեզ հետ եկած կենդանիներով հանդերձ՝ կթաթախվեք իմ լույսի գերխիտ ճառագայթների մեջ, որպեսզի այսպես լիակատար անհոգություն մեջ: Ես բույրատում եմ իմ ենթակայության տակ գտնվող բարձր դասի հոգիների հետ ժամանակ առ ժամանակ խաղալ: Այսուհետ դուք միշտ հիացմունք կզգաք առ ձեր իսկ սեփական բացառիկությունը: Դուք՝ սինդոզոցիները, անցաք հոգու մաքրման բոլոր փորձությունների միջով: Սիրեք միմյանց և սպասեք»,- ասաց Քրիստոսը՝ դուրս գալով Արայի կերպարանքից, և անկերպար լուսաշերտերի վերածված՝ հեռացավ դեպի փոքրիկ ոտքերով փոշի անող ոչխարների մոտ: Սինդոզոցիները մեկը մյուսի ետևից սկսեցին գոռալ Քրիստոսի ետևից, բայց Նա մարմին ստացած՝ նստած էր սպիտակ ոչխարների մոտ և ուրախ ծիծաղով խաղում էր նրանց հետ: Ոչինչ չէր լսում: Արայի ծնողները հետաքրքրված՝ հարցեր տվեցին սինդոզոցիներին նրանց փորձությունների մասին: Բայց ոչ ոք ոչինչ չէր հիշում: Կարծես Քրիստոսն իր հետ տարավ այդ փորձությունների մասին ողջ հիշողությունը: Շուտով դատարկ տարածությունից հոտող բուրբուրները դուրս վերցրեցին լամպապատ սեղանը, և սինդոզոցիներն անորոշ ժամանակով ընկղմվեցին կաթնաման փոշու մեջ: Այնտեղ կաթնագույնի և երկնագույնի գունահեղեղին ասես հնագույն, ազնիվ բնության ստեղծագործություն լինեք, որ ջրին ու սարդին պատմում էր սինդոզոցիների հոգու փափուկ, ալիքավոր զծերի մասին:

Շվեյցարիա, Քեռշվիլ  
06.08.2017

# ԿԵՐԶԸ

քան էլ չէին մտահոգված նրա կորստով, հիմա նույնիսկ ավելի անհանգստացած էին, քան նրա ծնողները: Սինդոզոյի բնակիչները որոշեցին խմբերի բաժանվել և փնտրել Արային: Այդ երազից հետո Արայի, Ագապիի, Հարմայի և թագավորության մնացած բնակչության ներսում օրեցօր Արայի նկատմամբ կարոտն ավելի ու ավելի էր ուժեղանում: Ամբողջ բնակչությունն ամենուր թափառելով՝ փնտրում էր նրան: Նրանք չէին գտնում ո՛չ այդ ընդարձակ, երկար ճանապարհը, ո՛չ էլ ճանապարհի վերջում երևացող լաբիրինթոսը: Սինդոզոյում մնացած շները, կատուները և մնացած կենդանիները, որոնք բարձր դասը որպես ողորմություն թողել էր ցածր դասին, նույնպես փնտրում էին Արային: Կարոտը պատել էր Սինդոզոյի բնակչության ամեն մի շնչավոր եակի: Այդ փնտրտուքի ընթացքում նրանք զգացին, որ բնության բոլոր մրգերի, բանջարեղենների, ծաղիկների, բոլոր հոտերը շրջապատել իրենց և անընդհատ ուղեկցում են: Այդ հոտերը մշտապես սնում էին սինդոզոցիներին և նրանք օրերով, շաբաթներով քաղց չէին զգում: Ամեն ինչի միատեղումը մի նպատակի՝ Արայի գտնելու մեջ, աղճատում էր երկրագնդի մակերեսին տիրող քառսի ուրվագծերը՝ խեղճացած պատկերների լուսածրային իմաստավորում տալով: Այդ լուսատուք ջարդում էր մարդկանց մտքերի խզրգանքները՝ նրանց ուղեղին մատակարարելով բոհեմական խառնուրդում մաքրված մի ապշեցուցիչ գեղեցիկ անթարթ աչքերի պատկեր: Եվ նրանք խելագարության նուպան հաղթահարած՝ կարոտով և փոթկոտ ժրջանությամբ փնտրում էին Արային՝ մեկընդմեջ հետևելով անթարթ գեղեցիկ աչքերին: Երբեք անսվա փնտրտուքից հետո աղավաղները լուր հասցրին, որ Արայի ծնողները գտել են լաբիրինթոս տանող ճանապարհը և միաժամանակ այդ խմբերին ուղեկցեցին այնտեղ: Հասնելով Արայի ծնողներին, սինդոզոցիները ոչինչ չտեսան, բացի ընդար-

կանց մազերն աստիճանաբար ուրվագծում, ձևավորում էին լաբիրինթոս տանող ճանապարհը: Հանկարծ շուրջն ամեն ինչ շողշողաց և երևաց լաբիրինթոս տանող ճանապարհը: Բոլորն ուրախ, իրենց ճաղատ գլուխները պսպրացնելով շողշողանքի մեջ՝ արագ վազեցին, քայլելով գնացին լաբիրինթոսի ուղղությամբ: Ձրային կենդանիներն իրենց ջրի հունը փոխելով դեպի ճանապարհը՝ մյուս կենդանիների, թռչունների հետ հետևեցին մարդկանց: Մարդկանց և կենդանիների ձայները միախառնվելով դատարկության մեջ՝ երևում էին որպես հսկայական օդի գուրձեր: Նրանք մոտ 41 թուպե վազելուց, քայլելուց հետո, հասան տեղ և կազնեցին լաբիրինթոսի մուտքի մոտ: Նրանց բոլորին կաշկանդում, սարսափեցնում էր, որ իրենց երազը կկրկնվի և դեռ քայլ չարած՝ ամեն ինչ նորից կչքանա: Չարմանալի էր, բայց կենդանիներն իրենց բնագոյային վախերը մոռացած՝ մեկը մյուսի ետևից, անկաշկանդ մտնում էին լաբիրինթոսից ներս: Այդ տեսարանն այնքան տպավորիչ էր, որ տպավորություն էր ստեղծում, թե իրենց մանկության տարիների սիրած նկարագրող գրքերի պատկերներն են շրշյունով ողջունում իրենց: Նրանք տեսնում էին, թե ինչպես են կոնֆետի թղթերը մանկական ուրախ ձայնով պարում լաբիրինթոսի ներսում: Այդ ամբողջ հմայանքին չդիմանալով՝ Ագապի, Արայի և Հարմայի ետևից բոլորն սկսեցին ներս մտնել: Ագապին լացակումաց շնչեցաց. «Հուսով եմ, որ կոնֆետի թղթերը մեզ կբերեն քեզ մոտ, տղա՛ս»:

Տառապանքից նվաստացած աշխարհը կորավ նրանց տեսադաշտից և նրանք հայտնվեցին լաբիրինթոսի ոլոր-մոլոր, զիգ-զագաձև աշխարհում: Նրանք նորից բաժանվեցին առանձին խմբերի և գնացին տարբեր ուղղություններով: Երազը, փշրելով կյանքի շրջանները՝ դարձել էր իրականություն: Լաբիրինթոսն Արայի ծնողների հուսահատությունից ու հավատից առաջա-



# ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԶՆԱՌԻՐՅԱԼ

- Արշակ, կոչից կաթում է: Խոհանոցի,- մի առավոտ տատն ասաց պապին: Կարմրաշեն բարձրադիր ամառանոցային գյուղաքաղաքում անձրևներն այնպես հաճախակի էին դարձել, որ չէին կտրվում արդեն քանի օր, և միայն ժամանակ առ ժամանակ երկնքից թանձր մառախուղ էր իջնում, ու ամեն ինչ մեռնում, հանդարտվում էր, և այդ ժամանակ, չգիտես ինչու, սկսում էր ավելի շատ կաթկթալ վերկից:

- Էսօր Դոլին կզանգեն,- պատասխանեց պապը՝ հայացքը «Տրուդ» թերթից չկտրելով:

- Դոլին չէ, պետք չի,- ինչպես միշտ *անհանգստացավ* տատը,- տարիքն առել է: Բա որ ընկնի- մեռնի, Աստված չանի, մարդիկ ի՞նչ կմտածեն, չե՞ն ասի՝ Դոլին քո տանիքին ի՞նչ էր անում: Բա որ ասեն՝ դու քո նախկին ենթականերին *օգտագործում ե՞ս*:

- Դոլին տանիքը կսարքի,- կտրուկ վրա բերեց պապը, իսկ դա նշանակում էր, որ այդպես էլ պետք է լիներ:

Դոլին վարպետ էր, ձեռքից ամեն բան գալիս էր: Թե՛ լեկտորիկ, թե՛ տանիքագործ, թե՛ մեխանիկ, ու աստանան գիտի, թե էլ ինչ, բայց այսպես ասած, հաջողակ չէր: Թվում էր, թե ոչ ոք նրան անգամ չէր տեսել՝ առանց վիրակապերի, առանց հեռանկների կամ առանց վերք ու բերվածքի: Միշտ հոսանքահարվում կամ տանիքից էր ընկնում, կամ էլ, որ վատթարագույնն էր, միշտ ինչ-որ կախարհաբանությունով, մուրճն էր ամբողջ ուժով իջեցնում մատների վրա... Նրա ձախարհության մասին նույնքան լեզվեղներ էին շրջում, որքան՝ նրա ոսկե ձեռքերի: Եթե երկրորդը ժողովուրդը մեկնաբանում էր որպես վերից ստացած շնորհ, ապա առաջինի պատճառը այդ նույն ժողովուրդը գտել էր վարպետ Դոլիի չլաված քաջության ու անվտանգության մեջ, ով երբեք ոչնչից չէր վախենում: Ինչպես պատմում էին, մի անգամ 45-ի զարնանը, նա միանգամից չորս ֆաշիստական տանկ էր խփել Բելգրադի կողմերում, ընդ որում՝ մեկը մյուսի հետևից: Տասնութը նոր էր բոլորում Դոլին, երբ մանկան տաքարյունությամբ նռնակներ էր նետում հակառակորդի տանկերի վրա ու տեսնելով դրանց վառվելիս՝ տեղում թռչկոտում էր ուրախությունից ու ամեն անգամ քթի տակ ասում՝ «ոռս պաչես»: Իր մակարոյծ-բառն էր, որը նա առիթ-անառիթ մտցնում էր խոսքի մեջ:

Ամենաանհեթեթը նրա խիզախություններից նրա հիվանդագին վերաբերմունքն էր էլեկտրականության նկատմամբ: Դե հիմա, մարդը չէր վախենում հոսանքից. ի՞նչ կարող ենք անել: Ու քթի տակ երգելով «Ռասգվետայի յարվանի ի գոռուչի, ոռս պաչես, պապիլի տուամանը իզ ռեկի, ոռս պաչես»՝ այդ հիսունհինգամյա «ծերուկը» մատները բթնում էր ու ոլորում բարձրավոլտ մալուխները նույն տաքարյունությամբ, որով գերմանական տանկերի վրա նռնակ էր նետում:

Առավոտյան Դոլին եկավ իր պես ջարդոխտող եղած կանաչ «Մոսկվիչ»-ով, ի դեպ, առավոտ ծեզին, այսինքն՝ ժամը տասին՝ բոլորիս այդ աղմուկից արթնացնելով: Դոլին կարճահասակ էր, ճերմակ մազերը «բոքս» խուզած, իսկ ուսին դաջվածք ուներ՝ «Մարո»՝ նետով խցված մի բոլորովին անհամաչափ սրտի կողքին:

Միասին մախաճաչեցինք (տատը, պատճառաբանելով, որ առավոտ վաղ է, հրաժարվեց բերել մի շիշ «Էն բանից»), իսկ հետո Դոլին փայտե սանդուղքով բարձրացավ տանիք: Արագ ու խանդավառությամբ էր աշխատում: Ինչ-որ բան էր դնում քթի տակ և մեխի ամեն զարկն ուղեկցում էր իր ֆիրմային «ոռս պաչես»-ով: Արշակ պապը, ուսերին հին պիջակ գցած, այգում՝ մի տաքուրետի վրա նստել և երեկվա խորովածի շամփուրներն էր մաքրում՝ երբեմն-երբեմն աչքը բարձրացնելով դեպի տանիք: Պապը մի քիչ վատ էր լսում:

Ինչ-որ բան էր դնում քթի տակ և մեխի ամեն զարկն ուղեկցում էր իր ֆիրմային «ոռս պաչես»-ով: Արշակ պապը, ուսերին հին պիջակ գցած, այգում՝ մի տաքուրետի վրա նստել և երեկվա խորովածի շամփուրներն էր մաքրում՝ երբեմն-երբեմն աչքը բարձրացնելով դեպի տանիք: Պապը մի քիչ վատ էր լսում:

Արշակ պապն ու Դոլին սկսեցին ուտել ու մի-մի բաժակ կոնձել: Դոլին, մի քիչ աշխուժացած, խոսեց.

- Ի՞նչ հրաշք, ի՞նչ հրաշք: Արաղ մի ասա, արցունք ասա: Մարգարիտներ են, է՛, պռնկի պղպջակները:

մյուս կողմ չի ընկել, և այդ ժամանակ իմ երկու զարմիկները, հավանաբար նրանք արդեն գիտեին ինչպես շամփուր մաքրել, համընդհանուր ուժերով վարպետին «երկնքից» ներքև էին իջեցնում: Կարա մորաքույրը, որ բժշկական կրթություն ուներ, զննեց Դոլիի ուռած ու կապտած դաստակը և հայտարարեց, որ երևի թե կտրվածք չկա, քանի որ Դոլին կարողանում է մատները շարժել: Պարզվեց, որ թերթաքարը պայթել էր, ու վարպետը մուրճով իջել էր սեփական ձեռքի վրա:

- Իսկ որ շոկ չստանա, քթի օղի տվեք,- ասաց Կարա մորաքույրը:

Ինձ ճանաչեցին գյուղի խանութ՝ քինո ու հաց գնելու: Գյուղի խանութներում այդ ժամանակ կարելի էր գտնել ամեն ինչ՝ սկսած աղից, շաքարավազից, կոնֆետից, կաթնամթերքից, ընդհուպ մինչև կաթոցիկ, ամեն տեսակի դեղորայք ու մեքենայի արգելակման կոճղակներ:

Տատը նորից սկսեց սեղան բացել (երկար ժամանակ էս վստահ էի, որ տատիկների գործը հենց այդ է՝ սեղան բացել, հավաքել սեղանը, ամանները լվանալ, ճաշ եփել, սեղան բացել, հավաքել սեղանը...), միայն թե այդ ժամանակ սեղանին հայտնվեցին օղու բաժակներ և «Ջերմուկ. Հայաստանի հանքային ջրեր» պիտակով առեղծվածային շիշ, որի մեջ, իհարկե, բնավ «Ջերմուկ» չէր:

Արշակ պապն ու Դոլին սկսեցին ուտել ու մի-մի բաժակ կոնձել: Դոլին, մի քիչ աշխուժացած, խոսեց.

- Ի՞նչ հրաշք, ի՞նչ հրաշք: Արաղ մի ասա, արցունք ասա: Մարգարիտներ են, է՛, պռնկի պղպջակները:

# ԴՈՒԼԻՆ

- Դոլի՛, սա՞ղ ես: Իջի՛, թեյ խմենք, պերերիվ անենք:

- Հետո՛, Արշակ Աշոտիչ: Մինչև անձրև հասցնեն,- և հերթական մեխին՝ «ոռս պաչես»:

1982 թվականն էր, այսինքն՝ նույն տարեկան էի. կանգնած էի պապի կողքին ու սովորում էի շամփուր մաքրել, թեև կարող էի շարունակ նայում էի հեծանիվիս, որ կանչում էր ինձ գյուղի փողոցների ցեխերի մեջ ման գալու և հետո առավելագույն արագությամբ սլանալու հսկայական ցեխաջրի միջով, որն, ի դեպ, առավոտյան էի նկատել, երբ մախաճաչից հետո աղբն էի տանում թափելու:

- Այսպես ուրեմն, սկզբում պետք է վերցնել երկու շամփուր ու իրար քսելով՝ քերել-մաքրել կպած մսի կտորները: Տեսնո՞ւմ ես: Իսկ հետո վերցնել կարտոֆիլը, քսել շամփուրին ու մի քանի անգամ առաջ ու ետ անել: Ամբողջ երկայնքով: Որ շամփուրը ամբողջությամբ թրջվի: Պետք է զգույշ լինել, հա՛, թե չէ ավիղ կծակես: Ա՛յ այսպես: Դե, հետո էլ արդեն վերցնում ես թերթն ու սրբում: Տես՛, թե ոնց թերթը կեղտոտվեց: Ա՛յ, հենց սրա համար պետք է խորովածից առաջ ու հետո միշտ մաքրել շամփուրները...

Եվ այդ ժամանակ մենք բոլորս լսեցինք վարպետ Դոլիի աղեկտուր ճիչը.

- Ո՛ռս պաչես...

Բոլորս հասկացանք. Դոլին հերթական անգամ վնասվել է: Ես վազեցի տան ետևը, որ համոզվեմ՝ արդյո՞ք տանիքի

Երբ Դոլին միայնակ խմեց «ջերմամիջուկային» քթի օղու ամբողջ շիշը, երբ ինձ նորից ուղարկեցին գյուղի խանութ՝ Համլետին զանգելու, որ գա հարբած եղբոր ու «Մոսկվիչ»-ի ետևից (օ՛, մի աննկարագրելի հաճույք էր հեծոյով չմփալով մտնել հսկայական ցեխաջրի մեջ), երբ արդեն անհնար էր ուտել Սոնա տատի հրամցրած ամբողջ ուտելիքը, քանի որ ստամոքսի մեջ էլ տեղ չկար, վարպետը հանկարծ երգեց.

*Մարերի հովին մեռնեն,  
Հովին մեռնեն, հովին մեռնեն.  
Իմ յարի բոյին մեռնեն,  
Բոյին մեռնեն, բոյին մեռնեն...*

Լավ չէի հասկանում խոսքերի իմաստը, հատկապես «յար» բառի, բայց վարպետի ձայնն այնպես թախաձայն էր հնչում, այնպես կարոտագին, և մեղեդին էլ այնպես շարունակ տխուր էր, որ ես ինձ շփոթված, մոլորված, միայնակ ու ապշած զգացի: Երբեք չէի լսել նման երգեր... Վարպետ Դոլին գրպանից հանեց իր մեծ, կապույտ գծավոր թաշկինակը, սրբեց աչքերն ու քիթը (մեծ աղմուկով) և շարունակեց.

*- Մի տարի է չեմ տեսել  
Տեսնողի, յար, աչքին մեռնեն...*

Երբ Դոլին ավարտեց երգը, Արշակ պապը տատից թեյ խնդրեց (տատի ասած. «Վերջում թեյ ես դառնալու: Էդքան թեյ խմել կլինի») և ասաց.

- Քեզ պակասվել է պետք, Դոլի: Կթեթևացնի: Քանի՞ տարի է անցել: Քեզ մի հետևող է պետք: Կխնամի, հոգս կբա-

չի: Հրե՛ն, Համլետն իր ընտանիքն ունի, երևի մի երկու տարուց բոռներ կծնվեն, էլ բանը քեզ չի հասնի...

- Էհ, Արշակ Աշոտիչ: Էլ ո՞ր ամուսնանամ: Ճիշտը՝ չեմ էլ ուզում: Մարոյից հետո սիրտս ոչ մեկի համար չի խնդում...

Երբ մութն արդեն ընկնում էր, վարպետի կրտսեր եղբայրը՝ Համլետը, եկավ: Կարա մորաքույրը նրան ասաց, որ Դոլին վաղը պետք է հիվանդանոց տանել, որպեսզի դաստակը նկարեն, իսկ քնելուց առաջ թող տանը վիրակապը փոխեն: Ես տեսա, թե ինչպես Արշակ պապը Համլետին օգնեց վարպետ Դոլիին մեքենա նստեցնել (երգելուց հետո լրիվ անջատվել էր), և ես տեսա, որ հնոտ «Մոսկվիչ»-ի դուռը փակելուց առաջ պապը վարպետի վերնաշապիկի կրծքագրպանը փող խոթեց: Համլետը պապին շնորհակալություն հայտնեց, ու «Մոսկվիչը» հեռացավ գիշերվա միջով: Պապը վերադարձավ տուն, նստեց բազմոցին, ակնոցը դրեց և ձեռքն առավ իր անփոխարինելի «Տրուդը», և տատը, որ երկի ամբողջ օրն իրեն զսպել էր, վրա սկսեց.

- Էէէ՛, Արշակ, ես հո ասում էի, որ Դոլին պետք չի կանչել: Միշտ մի բան պատահում է էլ մարդու հետ: Հիմա էլ բոլորն ասելու են, որ վարպետ Դոլին Արշակ Աշոտիչի տանիքին է ձեռքը կտորել:

Պապը չպատասխանեց:

Քնելուց առաջ Սոնա տատին ինձ ու զարմուհուս պատմեց, որ Դոլիի իրական անունը Կարո է, որ պատերազմից հետո, երբ դեռ բոլորովին ջահել տղա էր, քաղաքում աշխատել էր ինչ-որ մարդկանց մոտ, նրանք էլ խաբել էին խեղճին, իսկ երբ նա էլ փորձել էր պատիվ պահանջել՝ բղավելով. «Դոլյաս տվեք» (այստեղից էլ մականունը), այդ մարդիկ ուստիկանություն էին զանգահարել, և Կարոյին նստեցրել էին: Կարոն բանտից դուրս է եկել մեկուկես տարուց, վերադարձել է գյուղ ու սիրահարվել հարևանի աղջկան՝ Մարոյին, ով, ասում են, բոլոր սիրուններից ամենասիրունն է եղել:

- Մարոն ու Կարոն պիտի ամուսնանային: Բայց մի օր, Դոլին այդ բանն իր աչքով է տեսել, երբ Մարոն կով կթելիս է եղել, կովը քացով խփել է աղջկան, իսկ նա էլ ընկել ու գլուխը խփելով փարախի քարին, մահացել է: Իր փեսացուի ձեռքերի վրա: Ու Կարո-Դոլին եղպես էլ երբեք չամուսնացավ: Դրա համար էլ տխուր երգեր էր երգում: Պապը Դոլիին իր մոտ՝ ֆաբրիկայում, աշխատանքի վերցրեց ու միշտ, ինչով կարողացավ, օգնեց: Պապի ու Դոլիի ծնողները մի գյուղից էին:

- Տատի՛, իսկ դու գիտե՞ս, թե ինչ երգ էր երգում Դոլին, այսինքն՝ Կարոն,- հարցրեցի ես:

Տատը պատասխանեց.

- «Մարերի հովին մեռնե՞մ»-ը: Հա, բանն, գիտեմ: Բայց վաղը կերգեմ: Արդեն պետք է քնել:

Երբ տատը գնաց, և ես ու քույրս լույսն անջատեցինք, դեռ երկար ժամանակ չկարողացա աչք փակել: Շարունակ փորձում էի մտքումս վերհիշել Դոլիի երգի մեղեդին: Ես չէի հասկանում, թե ինչու էր նա ինձ այդպես հուզել: Եվ ես տանջվում էի՝ փորձելով հիշել նրա բոլոր «երաժշտական» ելեկցները, շեշտերը, որտեղ ներքև, որտեղ՝ վերև... Բայց, իհարկե, ոչինչ չէր ստացվում: Ի վերջո վառեցի գիշերային լամպը: Քույրս արդեն քնել էր: Գլխավերևումս, պահարանիկի վրայի լամպի կողքին մի մեծ մոծակ տեսա: Ձգուշությամբ վերցրեցի չուսս ու շրմփացրի մոծակին և կյանքումս առաջին անգամ ասացի.

- Ո՛ռս պաչես:

*Թարգմանությունը՝ Մարիա Լազարևայի*

Տնօրեն՝ **Գուրգեն Խանջյան**  
Խմբագիրներ՝  
**Արմենիկ Նիկողոսյան**  
**Նառա Վարդանյան**

Լրատվական գործունեություն  
իրականացնող «Մատիթիկոն» ՍՊԸ:  
Վկայական 03U063750, տրված 26.02.04:  
ՀԳՄ գրական- երիտասարդական թերթ:

Տպարանակ 700, ծավալը՝ 3 տպ. մամուլ:  
375019 Երևան 19,  
Մարշալ Բաղրամյան պող. 3,  
email: [gretert33@gmail.com](mailto:gretert33@gmail.com)  
[www.gretert.com](http://www.gretert.com)

Տպագրված է «Անտարես»  
հրատարակչատան տպարանում:  
Արտատպության դեպքում հղումը  
«ԳՐԵԹԵՐԹ»- ին պարտադիր է: